

# ԴՐՈՇԱԿ

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

## ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԳՈՐԾԻՉԸ

Ստորաքարը թշնամին խրախուռած իւր յաջողութիւններից՝ որ նա ունեցաւ շնորհիւ ցարի կառավարութեան, իւր լըրութիւնը հասցրել է ծայրայեղութեան և առանց քաշուելու անում է, ինչ թելադրում է իւր ժահրած ուղեղը, նա շարունակում է իւր գազանութիւնները, բռնի կերպով շնորհակալական թղթեր հաւաքելու ու բանտարկութիւնները: Նա բանտարկեց Շիշմանեան եպիսկոպոսին և քսոսրեց, մի գործ, որ նա չէր յանդգնում անել մի քանի ամիս սրանից առաջ, երբ նոյն եպիսկոպոսը բողոքագիր տւեց անգլիական կառավարութեան ու օգնութիւն խնդրեց, բայց այսօր նա յանդուգն կերպով անում է ամենայն ինչ և պետութիւններից ոչ մէկը չէ բողոքում: Եւ այդ հրէջը այն աստիճան է կատարել, որ այժմ պատրաստում է մի պաշտօնական հերքում հրատարակել «Վապոյտ գրքի» դէմ և կոտորածի յանցանքը ձգել հայերի վրայ, թէև միւս կողմից շարունակում է իւր դժոխային գործը, ու իրեն անմեղ ու ազատ կացուցանել մի որ և է թեթև պատասխանատուութիւնից անգամ: Այս երեոյթը բնորոշում է Հայկական հարցի դրութիւնը քաղաքական տեսակէտից, դիպլոմատիական աշխարհում մեր խնդրի վերաբերմամբ տիրում է այն աստիճանի անտարբերութիւն, որ այլևս ոչ ոք չի հետաքրքրում, թէ ինչ է կատարում այդ դժբախտ երկրում... Միայն երկու բարեկամներն են՝ սուլթանն ու ցարը, որ զբաղւած են դրանով ու ձեռք ձեռքի տւած աշխատում են թաղել ու նրա գերեզմանի վրայ հանգիստ քնել...

Իրերի այս դրութիւնը մեր հասարակական գործիչների մի մասի մէջ առաջ է բերել վճատում (démoralisation), բարոյական սնանկութիւն և նրանք գլուխները կորցրած, հագար ու մի միջոցներ են փնտրում մի կերպ դուրս գալու այդ դրութիւնից: Եւ ահա, ոմանք առաջարկում են ցարի կառավարութեան բարեկամութիւնը փնտրել ու նրա ոտքերի տակ դնել հայ ժողովուրդը,

միւսը առաջարկում է՝ դադարել յեղափոխական շարժումներից ու սպասողական դիրք բռնել և այլն:

Երևոյթը ցաւալի է, բայց միաժամանակ այդ երեւոյթը ցոյց է տալիս մեր այդ հասարակական / գործիչների բարոյական մակերեւոյթը ու նրանց քաղաքական անհասութիւնը, ցոյց է տալիս, թէ մեր գործիչների այդ մասը, որ աստիճանի քաղաքացիական ու հասարակական հասունութիւն ունի: Հասարակական գործիչը կեանքի իւրաքանչիւր երևոյթը դիտելով, ըմբռնելով, քննում և աշխատում է նրան ծառայեցնել իւր որոշարդէն գծւած նպատակին, և ոչ թէ ենթարկւել նրան, նրա ազդեցութիւնը կրել: Վերջին դիպածում ոչ թէ գործողը ինքն է լինում տիրողը, ղեկավարողը դրութեան, այլ ընդհակառակը, դառնում է խաղալիք, նա ինքն է դառնում առարկան: Եւ սա պարզ ապացոյց է, որ այդ գործիչը չունի ոչ մի պատրաստականութիւն, որ նա անգէտ է տարրական հասարակական գիտելիքներից, նա տ գ է տ է, ու բախտի բերմունքի ծընունդ: Եւ երբ մէկին միայն, բախտի բերմունքը, պատահականութիւնն է ձգել այս ասպարէզի մէջ և ոչ թէ որոշ հասունացած հասարակական գաղափարներ ու բարձր գգացմունքներ են նրան ղեկավարել դէպի այդ ասպարէզը, պարզ է, որ նրան նոյն բախտի բերմունքը պիտի դուրս շարտի... իրեն հետ պատեցնելով խեղճ արարածին՝ բախտի ալիքներին խաղալիք դառածին: Այն ժամանակ երբէք հոգ չէ, որ հասարակական գործունէութեան ասպարէզը կը զօրէի այսպիսիներից, ասպարէզը այս դիպածում ոչ թէ զօրւում է, այլ մաքրում, զտում է. եթէ առաջին հայեացքում երևոյթը ցաւալի է թւում, բայց լըջօրէն քննելուց յետոյ, գալիս էք բոլորովին հակառակ եզրակացութեան, որովհետև այդպիսիները միայն բացասական դժբեր են և աւելի վճատեցուցիչ տարր:

Ինչո՞ւ:  
Պարզապէս այն պատճառով, որ նրանք զուրկ լինելով հասարակական իդէալից, չունենալով ոչ մի ղեկավար-գաղափար, նրանք ամենաթեթև անյաջողութեան հանդիպելով դաւաճանում են գործին, յետ են նահանջում կամ արագութեամբ փոփոխում են իրենց հայեացակէտը գործունէութեան տեսակէտից ու այդպիսով առաջ են բերում ժողովրդի մի մասի մէջ վը-

Հատուծիւն ու անորոշ տրամադրութիւն, որի աչքում նսեմանում է այն լոյսը, դէպի որը դիմում է: Մինչդեռ Հասարակական գործիչից, մանաւանդ յեղափոխական ասպարէզում, պահանջուում է ամենադրական, որոշ, եթէ կարելի է այսպէս ասել՝ մե տ ա ղ ա ց ա ծ գ ա ղ ա փ ա ը, հայեացք, որի համար նա կը բարձրանայ և՛ կախողան: Այս տեսակ Հասարակական գործիչն է դրական ոյժ, սա է, որ աներկիւղ կերպով դիտում է կռիւր և իւր հարւածները ուղղում վտանգաւոր տեղին ու կուրծք բռնում թշնամու հարւածի դիմաց, որովհետեւ նա շատ լաւ գիտէ, որ մարդկային կեանքում վսեմ գաղափարները յաղթանակ են տանում կուռով, նա լաւ գիտէ, որ ինքը, հետեւապէս և իւր գաղափարները պիտի անցնին արեան ու կրակի միջից. և որովհետեւ այդ արիւնն ու կրակն է, որ ոջնչացնում է գարշելի լէշակերներին, գծուծ բռնակալներին, նա խոյս չէ տալիս, նա շաքի տակ չէ մտնում, այլ հաստատուն քայլերով առաջ է անցնում, համոզուած լինելով, որ յաղթութիւնը իրենն է, որքան էլ պայմանները անյաջող, աննրպաստ լինին:

Գարե՛ր է, որ մարդկութիւնը գոյութիւն ունի և նա յառաջագիմում է միշտ արեան ու կրակի միջից անցնելով և նա դեռ նոյն ճանապարհով է շարունակում հասնելու իւր իդէալին: Հայերս էլ իբրև անդամ մարդկութեան, իբրև նրա մի մասը, ղեկավարուում ենք նոյն օրէնքով. մենք էլ պիտի անցնինք կրակի ու արեան միջով. հետեւապէս սրա կամ նրա հովանաւորութիւնը փնտուել, յետ նահանջել, խոյս տալ, դա, եթէ չասենք դաւաճանութիւն է ազատութեան գործին, բայց կասենք, որ դա ամենաթանձր տգիտութիւն է, դա սպառնաց է քաղաքական տհասութեան և քաղաքացիական վախկոտութեան. իսկ սրանց գործունէութեան ասպարէզը ոչ թէ յեղափոխութիւնն է, այլ առևտուրը կամ բորսան... սրանք «սնանկացած յեղափոխականներ են», որոնք իրենց վարկը ուղում են վերականգնել հայ ժողովրդի պատւի ու կեանքի առևտուրով. ոչ ոչ հովանաւորութիւն և ոչ էլ սպասողական դիրք, այլ կռիւ. միայն պէտք է իմանալ վարել այդ կռիւր, որպէսզի գ ո Ր Ք ի ք չ գ ա ո ն ա ն ք թ շ ն ա մ ու ձ է ո ք ի ն... որպէսզի թ ա կ ա ը դ ի մ է ջ չը ն կ ն ե ն ք և յաղթութիւնը մերը կը լինի:

*Հրեալ*

Ն Ա Մ Ա Կ Պ Ո Ղ Ս Ի Յ

12/24 մարտի, 96 թ.

Պատրիարքին հրաժարականի խնդիրը բաւական սուր կերպարանք առաւ վերջին մեկ-երկու շաբաթները:

Կարգ մը պատճառներուն մէջ կարելի է նկատել մէքանի գլխաւորներ:

Ամիսներէ ի վեր սուլթանը ձեռք առած է քանի մը աչքի լոյս հայ էֆէնտիներ՝ յորդորելու հայոց պատրիարքը որպէս զի քաշի ազգային գործերէ: Եւ ատոր փոխարէն սուլթանը կը խոստանայ մեծամեծ բարութիւններ ընել միայն թէ պատրիարքը տապալած տեսնէ: Կըսէ թէ միջնորդի դեր կատարողներն եղած են՝ Նուրեան, Նորատունկեան և վերջապէս ամենէն վերջինը եղաւ Աբրահամ փաշա, որ կրկնելով նախորդներուն բանաձևը, յաւելած մըն ալ բերաւ Երզրզի պալատէն թէ՛ «Պատրիարքը կրնայ մնալ իր աթոռին վրայ, միայն սա պայմանով, որ շնորհակալութեան ուղերձ մը մատուցանէ կայսերական արիւնաթաթան դահլիճին ոտքը, ամբաստանէ Հայաստանի խեղճ՝ զոհերը որրանէն սկսեալ մինչև պառաւներն ու ծերերը»:

Իգմիրլեան պատրիարք, ինչպէս բնաւ տարակուսելի չէ, երկու պատասխան տւած է, թէ «Ինք իր հրաժարականի խնդիրը կրնայ նիւթ ընել վարչական ժողովներուն, այնպէս, որ եթէ անոնք հարկաւոր ու բանաւոր տեսնեն, կը հրաժարի ի սէր իր ազգին շահերուն. իսկ ամեն պարագայի մէջ ուղերձ չի կրնար խմբագրել գերեզմաններու մէջ վորովելու համար անմղ հոգիները ու ձեռքերը լալ Երզրզի դահլիճին թափել տւած անպարտ արիւններուն մէջ»:

Եւ եթէ հիմա պատրիարքը կը պնդէ իր հրաժարականի մասին, սա մտածումով է թէ, իր անձին դէմ Երզրզի անիրաւ հակառակութիւնը գուցէ նորանոր սարսափներու տեղի տայ, և ժողովուրդն ալ, բողոքովն ու ժառանգաւ, բարբարոսութեան հնարած ամեն խժորժանքին տակ, յուսահատ զայրոյթի ազդակներ բարձրացնէ իր դէմ: Այդ մտածումն է, որ ամենէն ծանր ու անտանելի եղած կերեւի իրեն: Եւ ահա հրաժարականի լուրը տարածելուն պէս, ամեն կողմէ դիմումներ եղան Աբրահան Պատրիարքին՝ խնդրելով իրմէն, որ պատրիարքական աթոռը թափուր չի թողու: Աւելին կայ նաև: Ինչէ՛ն յայտնի է, որ անիշխանութեան չպիտի մատնուինք. և այն ատեն սոսկալի կը դառնայ ազգիւն վիճակը:

Իգմիրլեան պատրիարքը միակ անձնաւորութիւնն է, որ հակառակ Երզրզի բոլոր ամբաստանութեանց, ուղղամիտ պաշտօնէի մը բոլոր հանգամանքները իր անձին վրայ կը միացնէ. ուղղամիտ է, անկաշառ է, անկեղծ է, և այդ հանգամանքներն են, որ զինքը հաւասարապէս սիրելի կընեն ամեն դասակարգի ու գաղափարի մարդոց: Եւ եթէ հայ յեղափոխութիւնն ալ կը համակրի պատրիարքին, սա պատճառով է, որ ինքը զերծ է ամեն կուսակցութենէ. միմիայն պատրիարք է, իր պարտականութեանցը ձայնին հլու անսացող: Այսպէս մինչ Երզրզը արիւնոռչտ աչքերով պատրիարքին վրայ յեղափոխականը տեսնել կուզէ, հայ յեղափոխութիւնը կը գտնէ անոր ամբաստի անձին վրայ անխարդախ հոգևորականը, ուղիղ ու ծշմարիտ մարդը:

Այժմ անցած է հրաժարականի վախը, վասնզի պատրիարքը իրեն եղած դիմումներէն անգամ մըն ալ համոզեցաւ, որ հայ ժողովուրդը գրկած է իր հոգևոր պետը. արիւններու, խժորժութեանց, սովի և անօրինակ չարչարանքներու մէջ իր հաւատքը խախտած չէ բնաւ: Եւ թէ ի՞նչ հաւաստիք կայ ընդունելու, որ պատրի-

արքին հրաժարականով՝ սուլթանը իր ունեցած բարիքները պիտի սրսկէ հայ աշխարհին վրայ: Սասունի ջարդը իր Աջգեանին օրովը ծրագրեց, այն պատրիարքին՝ որ իր արարածն ըլլալը հռչակեց սուլթանը: Ո՞ր են բարեցակամ սուլթանին բարիքները ուրեմն:

\* \*

—Անգլիական դեսպան՝ Սըր Ֆիլիպ Գըրրին Սրբազան պատրիարքին լուր կը ղզկէ, որպէսզի չհրաժարի ու այս առթիւ կը յայտնէ՝ թէ ընդհանուր քաղաքականութիւնը հայերի նկատմամբ փոխուած ըլլալով, այժմ աւելի նպաստաւոր հանգամանք մը ստացած է:

—Աերջերս Սուլթանի մտերիմներէն օտարագոյի բարձրաստիճան պաշտօնեայ մը հետեւեալը հաղորդած է:— «Պուզէի 5-6 լուսանկարներ ցուցնել, որոնք զանազան քաղաքներու մէջ պատահած կոտորածներու քստմնելի նկարները կը ներկայացնեն: Ասոնք դէպքի միջոցին, մի քանի հիւպատոսներու կողմէն մասնաւորապէս լուսանկարուած են, ղզկեցի Ֆրանսայ այս պատկերները: Թիւրքերուն վիճակը շատ վատ է, երկու-երեք տարի չտուեր, Տաճկահայաստան բոլորովին պիտի յեղաշրջուի:

Բարձր ընտանիքի պատկանող երկու թիւրք երիտասարդներ՝ սուլթանի վատ ընթացքէն դժգոհ ու յուսահատ, կարծեմ՝ քաղաքական տեսակետով ալ հալածուած՝ անցեալ կիրակի գիշեր, Պոն-Մարշէի մատերը դարեջրատուն մը մտնելով, ինքզինքնին թունաւորած և անձնասպան եղած են: (Սյդ մասին, Պոլսի լրագիրները մարտ 10-ին, դէպքէն քանի մը օր ետքը, բոլորովին քողարկուած կերպով կիմացնէին թէ՛ «անձնասպանները 20-23 տարեկան, Ֆէրիտ ու Պէհճէի անունով երկու երիտասարդներ են): Մէկը հոն անմիջապէս մեռած է, իսկ միւսը կառքով փոխադրուած միջոցին: Հիմակ սուլթանը իր բոլոր պաշտօնեաներուն հրամայած է, որ գաւառներու մէջ թիւրքերը հայերուն հետ լաւ վարին ու օգնեն անոնց կարօտեալներուն: Դիւրին է ըմբռնել, թէ այս օրերս մեծ վախ ունեցած է: Այս միջոցին հայոց պատրիարքը լաւ կընէ, թէ որ չհրաժարի...»

—Աերջերս Քիլիսի մէջ (Այնթապի մօտ) մեծ կոտորած մը ևս տեղի ունեցած ըլլալը դեսպաններէն իմացուեցաւ. մանրամասնութիւնք դեռ կը պակսին:

## Կ Ո Տ Ո Ր Ա Ծ Ն Ե Ր

Մ Ո Ւ Շ

II

• 20/1 նոյեմբեր

Այժմ տեղւոյս հայ հասարակութիւնը սարսափի մէջ է: Որքան որ ամեն մարդ ապաստանած է իր տան մէջ և շատ զգուշաւոր դիրք բռնած է, սակայն տեսնելով մէկ կողմէն տեղական իսլամ հասարակութեան

սպառազինութիւնը և գունդէ-գունդ վայրենաբարոյ քիւրդ աշիրների և չէչէնների քաղաք դիմելը, իսկ միւս կողմէն հաճի Թայիպի իսլամաց մէջ գրգռումներ շարունակելը, ըստէ առ ըստէ կապասն արեւալի կոտորածին, եթէ կառավարութիւնը անկեղծօրէն չի միջամտէ և ազդու միջոցներ ձեռք չառնէ, ինչ որ մեղանհաւատալի կը թուի:

Հոկտեմբերի 4-ին քաղաքական ժողովոյ անդամք կառավարչի տունէն մեկնելէ անմիջապէս յետոյ, առաջնորդարան ժողով գումարեցին և թագրեր մատուցին կառավարչին, ինդրելով, որ հարկ եղած միջոցները ձեռք առնէ հայ հասարակութեան կեանքի և կայքի ապահովութեան համար, զինաթափ ընէ թիւրք հասարակութիւն և աղէտին առաջն առնէ: Թէև կարավարիչը տաճկական խորամանկութեամբ երկդիմի գրաւոր, իսկ բերանացի խիստ ապահովեցուցիչ խօստուածներ շուսալած է, սակայն կարելի է միթէ հաւատք ընծայել կառավարութեան անկեղծութեան, քանի որ յայտնի ապացոյցներ կան, թէ կառավարութիւնն է այս ամեն բանը սարքող և իսլամ հասարակութիւնը դժգոհ հայերի դէմ: Կառավարութիւնն է, որ գաղտնի ցրեց իսլամաց զինուորական մթերանոցի բոլոր զէնքերն և ազդամթերքն, կառավարութիւնն է, որ թոյլ կը տայ իսլամ խուժանին զինուած սանձարձակ շրջել շուկային և թաղերին մէջ, կառավարութիւնն է, որ թոյլ կը տայ թիւրքերին յայտնի համարձակ սպանալ հայերին հետեւեալ խօսքերով՝ «Հայեր, լրացած են ձեր օրեր, ձեր ըրածներ մենք ձեզի չենք թողուր»: Աերջապէս կառավարութիւնն է, որ չէրքէզներին, բատկանցի, բալագի, խիանցի, խոյթեցի, չխուրցի, սասունցի և այլն աշիրէթներին հրաւիրած է, որոնք ամեն օր գունդ կը դիմեն քաղաք կառավարութեան պաշտօնատուն և հարկ եղած հրահանգները այնտեղէն առնելով՝ կը ցրին թիւրք թաղերի մէջ:

Այս տագնապալից կացութեան վերջ մը դրուելու համար առաջնորդարանի մէջ ամեն օր նիստ կը գումարի քաղաքական ժողովը և դիմումներ կընէ, թէ կառավարութեան և թէ քաղաքի երևելի թիւրքերին: Հոկտեմբերի 17-ին ևս կառավարչի հրամանին համաձայն՝ քաղաքական ժողովոյ անդամները դիմելով տեղւոյս ազդեցիկներէն՝ իւրեմա հաճի Ապտուրահման էֆէնդիին, որոյ տան մէջ ներկայ են եղած թիւրք պաշտօնական և անպաշտօն առաջնակարգներէն՝ Միւֆտին, Թայիպ և Խալիլ էֆէնդիք և ուրիշներ, յայտնելով հայ հասարակութեան սպառնացող մօտալուտ վտանգը, ապահովութիւն խնդրեցին: Իսկ թիւրքերը յետ երկար վեճաբանութեան յայտարարեցին թէ՛ «Իսլամ հասարակութիւնը չափազանց դայթակղեր է և կը կասկածի Անայ ու Բաղէշի Պատ. Միսիոնարացի Սասուն ներկայութեան: Սասունցիք միամիտ ժողովուրդ լինելով կարող են անոնց ներկայութեան քաջաբերուել և վատանդաւոր ընթացքներ ունենալ. ուստի եթէ կուզէք, որ իսլամ հասարակութիւնը հանդարտի, իւր զէնքերը մի կողմ դնէ և խաղաղութիւնը վերահաստատուի, հարկ անհրաժեշտ է, որ Մ. Քոլ. և Տքտ. Բէյնօտ անպաշտօն Սասունէն հեռանան և քաղաք իջնեն, և որովհետև Սասնոյ կարօտելոց ճշգրիտ ցուցակը իրենց մօտ ունին՝ հետեւաբար այսուհետև նպաստի բաշխման մէջ զեղծում տեղի չունենար, կարող են իրենց կողմանէ

մէկ կամ երկու բողոքական կամ լուսաւորչական հաս-  
 յեր ուղարկել և նպաստի բաշխումը կատարել անոնց  
 ձեռքով. իսկ եթէ շունին վստահեցնի մարդ, այդ դէպ-  
 քում կարող է առաջնորդի փոխանորդը երթալ այդ  
 գործը կատարել: Արքան որ հայք ջանացին համոզել  
 թիւրքերին, թէ պատ. միսիոնարը լոկ մարդասիրական  
 գործով կզբաղին ի Սասուն, ինչպէս 30 տարիներէ ի  
 վեր ի Վան և ի Բաղէշ, թէ անոնք երբէք վասնգաւոր  
 անձնաւորութիւններ չեն եղեր, նամանաւանդ հայոց  
 կողմէն ուղարկած չլինելով և ուղղակի Անգլիական  
 հիւպատոսարանի հովանաւորութեան տակ գտնուելով,  
 չեն կարող զանոնք Սասունէն վար կանչել: Սակայն  
 թիւրքերը պնդել են իրենց այդ պահանջման վրայ և  
 կրննել են նոյն խօսքը յարելով, թէ յիսլամ հասար-  
 ակութիւնը զնստածափ չի լինիր, որչափ միսիոնարը  
 ի Սասուն կը գտնուին: Քաղաքական ժողովը ճարահա-  
 տեալ մի նամակ է գրած բողոքականաց քարոզիչ և  
 Անգլիական հիւպատոսարանի թարգման պ. Յակոբ  
 Միքայելեանին, պատմելով թիւրքերի կողմէն եղած ա-  
 ռարկութիւնները պատելի միսիոնարներին մասին և  
 անոնց պահանջը, աւելացուցած է հետեւեալ տողերը.  
 «Արդ հայ հասարակութեան հետ մենք ևս քաջ գի-  
 տենք արդէն, որ պատելի միսիոնարը միմիայն մար-  
 դասիրական և դժութեան գործ մը կը կատարեն ի  
 Սասուն և ոչ այլ ինչ. և թէ մահմեդականք իզուր  
 տեղ կասկածներ կը յայտնեն, առարկութիւններ կը-  
 նեն. ուստի կը խնդրուի, որ թիւրքերի այդ պահանջումն  
 հաճիք հաղորդել վսեմ. հիւպատոսին ու միանգամայն  
 հայ ժողովրդեան ներկայ վտանգալից կացութիւնն ներ-  
 կայացնելով նորին վեհապետութեան, հարկ եղած դարմա-  
 նը խնդրէ»:

Ակներև կերևայ, որ թիւրքեր որոգայթ կը լարեն  
 հային և կը ջանան կեղծ խօսքերով համոզել և վա-  
 ճառատուններ բանալ տալ, որպէսզի ինչպէս բաղէշցի  
 հայ ազգայիններին, նոյնպէս և մշեցիներին իրենց ցան-  
 ցը ձգեն և ցորենի պէս հնձեն անոնց կեանքն ու կայքը:

Խ Ն Ո Ւ Ս

I

Անցեալ հոկտեմբեր ամսոյ սկզբներից Խնուսի ամ-  
 բողջ ժողովուրդը ահի ու սարսափի մէջ էր գտնուում:  
 Ամեն կողմից, ամեն մի մարդուց՝ քիւրդից, տաճիկից,  
 ասիկներուց և այլն բեկերից և քիւրդ ցեղապետներից  
 լսուում էր՝ «Կայե՛ր, ձեր օրհասը մօտ է». քրդերն ա-  
 սուում էին՝ «Շաքըր փաշայ քը նափէ դավլաթէ ամըր  
 դայեա կօսանձան, սարէ Փլայ ժեկըն, թալանէփան  
 քըպըն» (Շաքիր փաշան թագաւորի անունով հրաման  
 է տւել քիւրդերին, թէ հայերի գլուխները կտրեցէ՛ք  
 և նրանց ունեցածները կողոպտեցէ՛ք): Իսկ Խնուսի բեր-  
 տահած հայի՝ թէ բերդեցիները և ջորքերը, ամեն մի պա-  
 տահած հայի՝ թէ բերդեցիներին և թէ գիւղացիներին  
 սարսափեցնում էին այս խօսքերով՝ «Գեաւուր էր-  
 մենիլար կիւնլարըզ ազալիշ տըր, փագիշահ ամըր էթ-  
 միշ սիզի քեսմիա, այսինքն (անօրէն հայեր, ձեր օրերը  
 քիչ է մնացել, թագաւորը հրաման է արձակել ձեզի  
 կտորելու): Ահա այս, տեսակ սարսափեցուցիչ խօսքե-

րի և սպառնալիքների տպաւորութեան տակ էին գրա-  
 նուում ամբողջ Խնուսի հայ գիւղացիները, երբ Բայազէ-  
 տից եկաւ Շաքիր փաշան և անցաւ Կարին: Այդ օրե-  
 րուամ էր, այսինքն հոկտ. 2-3-ին, որ Խալի-Չափուշ  
 խառն քիւրդերի հետ բնակւող հայերը, թուով 60  
 տան չափ, թալանեցին, թէ գիւղի միջի և թէ շար-  
 ջակայ քիւրդերից: Հայերի բոլոր ունեցածները՝ անա-  
 սունները, հացահատիկները, տնային ամեն մի կահ կա-  
 րասիները, բոլորը տարան, ոչինչ չթողեցին: Գիւղացիք  
 թիւրքերի յարձակումից վախեցած՝ փախան այս և այն  
 շրջակայ հայ գիւղերը, մանաւանդ, որ քիւրդերի յար-  
 ձակման ժամանակ գիւղում գտնւած ջորքերը ոչ մի  
 պաշտպանութիւն չէին ցոյց տւել հայերին, աւելի զօր-  
 քերի անտարբերութիւնից սարսափած գիւղացիք, ա-  
 ռանց ուշադրութիւն դարձնելու իրենց ստացւածքի կո-  
 ղոպտելուն, միմիայն իրենց կեանքը վտանգից ազատե-  
 լու համար, փախչում են այս և այն կողմերը: Մինչև  
 այժմ էլ այդ գիւղի մի քանի երիտասարդներ, քիւր-  
 դերի սարսափից վախնալով, շրջում են այս ու այն  
 շրջակայքի համարեա աւերակ դարձած գիւղերում և  
 չեն գտահանում իրենց տներն երթալ: Մի շարաթից  
 յետոյ դայմագամը ձևացնելով, որ նոր է իմանում  
 Խալի-Չափուշի գէպքը, հաւաքում է փախստական հա-  
 յերին և թալանած ստացւածքների մի աննշան մասը  
 յետ խլելով քիւրդերից, տալիս է հայերին և նորից  
 ամենքին վերադարձնում իրենց տները:

Մի քանի օր անցնելուց յետոյ, խալի-չափուշները  
 խնդիր են ներկայացնում գայմագամին և ցոյց տալով  
 աւազակ քիւրդերի անունները, որոնք իրենց թալաներ  
 են, պահանջում են իրենց անասունները: Գայմագամը  
 բարկացած հայհոյում է դրանց և մի քանիսին էլ  
 բանտարկում, որոնք մինչև այժմ էլ դեռ բանտրուում  
 են և ամենաթշուառ դրութեան մէջ: Բացի այդ, մի  
 քանիսներն էլ, որոնք գիւղից փախելիս են լինում  
 քիւրդերի յարձակման ժամանակ, դրանցից մի քանիսը  
 նոյնպէս ձերբակալուում և բանտ են տարւում:

Հոկտեմբեր 7-ի գիշերը քիւրդերը միացած ջորքե-  
 րի (ղըրսարդարների) հետ յարձակւում են Ղարա-  
 Բէօփրու գիւղի վրայ և գիւղի առաջից տանում են  
 400-ի չափ ոչխարներ և միւսնոյն ժամանակ կանչում  
 հայերին. «Եկէ՛ք, եկէ՛ք մենք ենք տանողները, Ֆախի  
 Ահմէդը, Ուսոյ է Բրօն և այլն» անուններ տալիս: Գիւ-  
 ղացիք քիւրդերի կողմից այդքան վստահութիւն ունե-  
 նալը որ ոչեաք յափշտակած ժամանակ այդպիսի մի  
 հրաւեր կանչեն հայերին, տարօրինակ բան համարե-  
 լով, դիմում են գիւղում գտնւած միլազիմին, որը  
 10-15 զինւորների հետ, առաջնորդում է Բաղէշի փա-  
 շայի հարեմին Կարինից-Բաղէշ:

Գիւղացիների թախանձանաց, թէ «Օգնեցէք մեզ,  
 մեր գիւղի ամբողջ ոչխարները յափշտակեցին քիւրդե-  
 րը և դեռ ևս չեն հեռացել, գիւղին մօտ են, օգնու-  
 թեան հասէ՛ք», միլազիմը բոլորովին անփոթե կերպով  
 պատասխանում է՝ «Կեաւուրլար, նէ իստէօրսըզ պէն-  
 տէն, սիզն այնալի վէ սիւրմալի թիվաւըլարընզ վար  
 սիզ կէտըն դէօնդարըն. սիզն իչնդտա 800 ջանփեա-  
 լար վարտըր» — (անօրէններ, ի՛նչ էք ուզում ինձնից,  
 դուք ունիք այնալի և սիւրմալի հրացաններ, դուք  
 դնացէ՛ք, դարձրէ՛ք ոչխարը, ձեր մէջ պահւած կան  
 800-ի չափ անձնուրացներ): Միլազիմի այս պատաս-

խանից աւելի վախեցած, գիւղացիք թողնում են ոչ-խարները քիւրդերի ազատ կամքին և իրենք քաշուով իրենց աները:

Այդ միջոցները բերդում սպանում են Ձաքարէ անունով մի երիտասարդի, որը չէ բարևում եղել իւզ-բաշուն: Դօչլի գիւղում սպանում են Մնօ անունով մի գիւղացու, որը դաշտից ցորեն է կրելու լինում: Հոկտ. 8-ին Գոյանդուկից Շիրվանշէխ տանող ճանապարհի վրայ սպանում են 18 տարեկան շիրվանշէխի մի երիտասարդի՝ Ձաքարէ անունով, վիրաւորում են նրա ընկերոջը՝ Թամօ Յարգինին: Հոկտ. 11 և 12-ին յարձակում են Աղձամէլիք և Խլբես գիւղերում գանւած հարուստ աների վրայ և հյրացանի գնդակներով սարսափեցնում գիւղացիներին և հեռանում են դաշտից, տանելով ոչխարները և տաւարները: 17-ին և 19-ին յարձակում են Բուռնազ և Ղարաքէօփրի գիւղերի վրայ. առաջինից խլում են ոչխարների հօտը 300-ի չափ, իսկ երկրորդից 150-200-ի չափ. տաւար: Բուռնազից չը վստահացան ընկնել աւազակների յետևից իսկ Ղարաքէօփրիցից թէև ընկան, բայց, բացի ոչ մի տաւար չը դարձնելը, սպանւեցին՝ Սահակ և Խաչիկ երկու հօրեղբօր որդիները և վիրաւորեցին՝ Արգին և Միսակ անունով երիտասարդները: Այս բոլորը ցերեկով է լինում:

Նկարագրածս բոլոր անկարգութիւններն արեւ են՝ յայտնի ցեղապետ, քիւրդերը, որոնց ահանէ անւանէ ճանաչում են բոլոր, հայ թէ քիւրդ, մեծ և փոքր:

Այդպիսի դէպքերում գիւղացիք գանգատում են գայմագամին կամ բողոքադրերով և կամ բերանացի կերպով: Բացի այն, որ ոչ մի դրական բաւականութիւն չէ տալիս գիւղացիներին, թէև գիւղացիք մէկ մէկ տալիս են աւազակների անունները, գայմագամը այդպիսիներին իսկոյն բանտ է նստեցնում, որոնք համարձակում են քրդերի ցեղապետների վրայ գանգատելու. դրանք մինչև հիմա էլ բանտում են, անասելի նեղութիւններ կրելով: Մի քանի գիւղացիներ դիմում են գայմագամին և պաշտպանութիւն խնդրում. գայմագամը այդպիսիներին միայն մի թիւթե պատասխան տալով, ասում է՝ «Քիւրդէր սիզըն ուստիւնայ կէտիկի վազըթտայ, հիջ կարշի գոյմայըն, նէչիւն քի փագիշահըն ամրի տըր, էկէր սիզ սաղ գալտըզ սիզըն մալարըզ պէն գէրի ալըը վէրիտօրըմ սիզէ» (քիւրդերի ձեռ վրայ յարձակած միջոցին, երբէք մի դիմագրէք, որովհետև թագաւորի հրամանն է, իսկ եթէ դուք ողջ մընացիք, ձեզանից տարւած բոլոր ստացածքները, ես ետ կառնեմ և ձեզ կը վերադարձնեմ):

Այլ ևս ոչ մի կասկած չկար, որ կառավարութեան թերադրութեամբ մի սարսափելի վտանգ է սպառնում հայերին, վտանգը անխուսափելի է դառնում: Սկսած հոկտ. 20-ից մինչև 28-ը ամբողջ Խնուս գաւառը գանազան քիւրդ աշխրէթներ յարձակումներից աւերակ դարձան գիւղերը, սպանւեցին և զանազան կողմեր փախան բնակիչները, ոմանք էլ գոհ դարձան ցրտի, վախի և քաղցի: Մի առ մի իւրաքանչիւր գիւղերի մէջ պատահած դէպքերը նկարագրելը աւելորդ համարելով, խնդրում եմ առ այժմ բաւականանալ այսքանով:

Տ Ի Գ Ր Ա Ն Ա Կ Ե Ր Տ

III

Արդարութեան դէմ չմեղանչելու համար, պէտք է ըսել թէ՛ բարձր հրամանն, կարելի եղածին չափ, կէտ առ կէտ գործադրելու փոյթ տարւած է քաղաքիս արւարձաններու, հայ գիւղերու, աւաններու մէջ: Կարելի չէ անլաց աչքով պատմել գէթ համառօտակի, այդ խեղճ ողորմելիներու արկածներն ու ցաւերը:

Քաղաքէս կէս ժամ հեռու, տեղոյս ուխտատեղի համարւած Ալիբինառ անուն գիւղի Ս. Ասուածածին մատուռն, իր նորաշէն 20 սենեակներովն այրւած, կողոպտւած և գիւղի Տէր Գասպար քահանան ալ գիւղացիներու հետ նահատակւած է, անկարագրելի բարբարոսութիւններով: Նմանապէս կէս ժամ հեռու Տիգրիսի եզերքին վրայ տարածւած՝ Թէրիքան նահանգին Գթուպըլ գիւղը, իր շահատակութիւններովն նշանաւոր հանդիսացող՝ «Ալօյէ Քէչէլ» ըւած հերոսի և անոր մարդատոշոշ արբանեակներու խմբէն յարձակում կրելով՝ կողոպտւած, աւերւած և 650-է աւելի բնակիչներէն հողիւ 60 հոգի ազատւած է, այն ալ մեծ մասամբ վիրաւոր:

3 ժամ հեռու Սադի գիւղի մէջ Ս. Թագէտս առաքելին կառուցած Ս. Խաչ մատուռը, որ դարերէ ի վեր ժողովրդին համար սրբափայր մ'էր, մոխրակոյտ դարձած է: Գիւղացիներէն մեծ մասը ջարդւած և ինչքերնին բոլորովին կողոպտւած է: Աերջապէս քաղաքէս 2 ժամ հեռու Հայ Եղիկ և Կահայի անուն հայաբնակ գիւղերն աւերելով, գիւղացիներն մահացնելով, անոնց Տէր Աբրահամ և Տէր Արիստակէս քահանաներն ալ բռնի թըքացնելէ յետոյ, մարմիննին փեռեկած են: Քաղաքէս 12 ժամ հեռու այն դարաւոր և թանկագին հնութիւններովն նշանաւոր Բարձրահայեաց անունով վանքը, բոլորովին կողոպտելէ, մեղացնելէ յետոյ, միաբանութիւնն սրէ անցուցած են, բացի Տէր Յակոբս վարդապետէն, որ իր կամքին հակառակ, թըլլփատել տալով կը թըքացնեն և մէկ ահանջը կը կրտրեն: Սոյն վանքի ստորտը դանւած Արդնի կոչւած գիւղաքաղաքի բնակիչներու մէկ մասն ջարդելէ, ամբողջ կողոպտելէ յետոյ՝ վերի թաղի քահանան կը խողխողեն և եկեղեցին ալ ճամփի փոխած են հիմա: Աերջապէս բազմաթիւ էջերու կը կարօտի պարզելու համար այն հայ պատուհասեալ գիւղերուն, անկիւններուն, ցանկը, ուր աւերիչ տարրն գրեթէ բան մը չէ խնայած: Քաղաքը խուժող քրդերն կը պոռչկտային, ի մեծ սարսափ հայերուն: «Յերման տերքէթիէ Փըլլէ պը գուլի նըն» (հրաման ելած է, կեամբներն բնաջինջ ընենք պիտի): Չմոռնամ ըսել, թէ գեղեցիկ սեռէն անոնք, որ իրենց գեղեցկութեամբ աչքի կը զարնէին, քիւրդ խուժանի ձեռքով, մեծ գիւղերէն առւանգելով՝ իրենց պետերուն, բէկերուն նէր տարւած են:

Աերջապէս ամբողջ 4 օր, քիւրդ խուժանն քաղաքիս մէջ հիւրասիրելով, կըսուի թէ Անգլիական հիւպատոսի քաշած խստիւ հեռագրի շնորհիւ, կը մեկնին կողոպուտի գոյքերով ծանրաբեռնւած, իրենց հետ տանելով նաև այնքան անմեղ նահատակներու սև-սև ուրուականներն:

Եւ ահա կառավարութիւնն իր զօրանոցէն ելնելով՝ կը վերստանան իր հսկողութեան և անդորրացման պաշտօնը՝ զոր ընդհատեց բարձրագոյն հրամանին չհակառակելու համար: Բնականաբար առաջին գործը պիտի ըլլայ այս աւերումի և աղէտի սկզբնապատճառ հեղինակն գտնել, և կամ աւելի պարզօրէն ըսելով՝ հայերն իբր նախարարական ցոյց տալու մաքիսիւնական մեքենայութիւններ հնարել: Արդարև, առաջին գործն եղաւ քաղաքիս հայ նշանաւոր և երիտասարդ դասակարգէն բաւական թուով անձեր ձերբակալել և կալանաւորել, իբրև խռովարար, և այս վաւերական ապացոյցներով հաստատելու համար, քաղաքիս միջէն երեք անվաս և աղքատ երիտասարդներ, — Լաբուկ Թուխ, Մինասի տղայ՝ Փօփօ և Ճիտտէի տղայ՝ Պուպօ — ոստիկանատուն բերել կը արւի, ուր ասոնց, մահաւան սպանալիքներու տակ կստիպեն ըսել, թէ «Տեղոյս հայ նշանաւոր ազգայիններէն՝ Մինասեան Յովհաննէս Էֆէնդիի որդին՝ հաճի Յակօբ անուն 25 տարեկան երիտասարդը մեզի հինգական ոսկի տալով՝ զօրկած է ձամբներուն վրայ յարձակում ընելու և թիրքերուն սպանելու»: Այդ երեք երիտասարդներն թէ և աղքատիկ, այլ այսպիսի սուտ և անտեղի զրպարտութիւնով ամբողջ ժողովուրդ մը սոսկալի պատասխանատուութեան տակ ձգելու վախէն, ահաբեկ, կը պատասխանեն վերջնականապէս, թէ՛ «Անկարելի է չեղած բանի մը վկայել»: Տղոց բացասական պատասխանի վրայ, կը հրամայէի ասոնց սոսկալի ծեծ մը քաշել. բայց տեսնելով, որ իւրաքանչիւրն իր մարմինն ոսկորներով ընդունած 500-է աւելի «տէյէնէկ»-ի հարածներէ յետոյ զեռ կը յամառին իրենց ընթացքին մէջ, և մտածելով անշուշտ, թէ կատարած այսքան զոհերու թիւն վրայ նոր 3 ևս աւելցնել աւելորդ էր, կը պարտաւորին զանոնք զօրկել իրենց տուներ, բռնակրով, մահամերձ վիճակի մէջ:

Տիգրանակերտի ժողովուրդն, իր այս գառն, յուսահատ ճգնաժամին մէջ սնտոի յոյս մը տածել փութաց՝ քննիչ յանձնախումբի մասին, որ այն ինչ հասած է տեղս և որոնց գործն եղած է՝ նախ, մէկ քանի թիրքեր բանտ դնել, երկրորդ, ամբողջ եկեղեցիներու զանգակներն հնչեցնել տալ, երրորդ, յայտարարութիւններ փակցնել պատերուն, թէ պէտք է ոչ իսլամ և իսլամ ժողովուրդն սիրով ապրին իրարու հետ, մինչ այս վերջինները, կարծես դեռ գոհացում չուտած լիովին իրենց գազանային փափագներուն, մէկ-երկու անգամ նորէն մզիկիներն համախմբելով, մնացած հայերու վրայ յարձակելու և բոլորովին բնաջինջ ընելու չարամիտ խորհուրդներու մէջ կը գտնուին, որով հայ հասարակութիւնը միշտ ահ ու սարսափով պաշարած կը մնայ ցարդ, վագրի մը ձիրաններուն տակ դրած զոհի մը օրհասական վիճակին նման: Կառավարութիւնն հիմա սկսաւ աւելի ուշադրութիւնը դարձնել տեղական առաջնորդական տեղապահ հօր վրայ, որ միակ պաշտպանն մնացած է հայ ժողովուրդին, քաղաքիս մէջ: Եկէ կողմէ չարագուշակ խորհուրդներով երկնած ծուղակներ լարել կը մտածէ, որ զայն տապալէ. իսկ միւս կողմէ չի դադարիր զգուշական, քոչարկեալ միջոցներով՝ քաղաքական ստապատիր յանցանքներ որոնել, գտնել, և այդ ամբաստանութեամբ բանտին ամրափակ դռներովն թուր կանգնել անոր դոյզն գոր-

ծունէութեան առջև: Վերջերս Բաբիլոնէ և Նինէէ տիգրանակերտցի հայ վաճառականներ բերեցան հոս իբր խռովարարներ: Կողպուած ապրանքները մաս առ մաս, թիրքերու ձեռամբ, հրապարակին վրայ բաց է լ բաց է վաճառ կը հանուին, ամենէն վար գներով: Վերջապէս, Տիգրանակերտ իր շրջակայ հայաբնակ վայրերով 5000-ի մօտ կեանքի կորուստ ունեցաւ, իսկ նիւթական վնասն 2 միլիոնէ աւելի: Բացի 2-3000 ոսկւոյ ապրանքներէն, որոնք Պոլսէ, Հալէպէ և այլ տեղերէ զօրկելով, ձաբան կողպուած են, մեծ մասամբ Հ ամի դի է գունդերէն: Տիգրանակերտէն 2 օր հեռու եղած Մարտին գիւղաքաղաքին մէջ ևս, ուր մեծ մասն ասորիներ են, աւելի կամ նազ չափով այս անօրէնութիւնները գործադրած են: Կենդանի մնացած քրիստոնեաներուն ալ խստիւ կը պատուիրւի, թէ ձի չպիտի հեծնեն, իփէքիլի չիթառէ չուխայ չպիտի հագնին, գլուխնին սև պիտի կապեն և ճակատին կամ դէմքին վրայ սև արատ մը կրելու են ի նշան կեանքաւորութեան, անշուշտ այս նշանակիչ արատով իրենցմէ զանազանելու համար:

Պ Ր Ո Ւ Ս Ա Յ Ի Բ Ա Ջ Ա Ր - Գ Ի Ի Ղ Է Ն

I

Սեպտեմբեր 18-ի Պոլսոյ դէպքէն ի վեր, այս կողմերն ալ սկսաւ բացարձակ տեղի ունենալ նոյն երկնայթիւն ինչ որ կըսէիք, թէ յատուկ է մեր հեռաւոր եղբայրներուն: Թէպէտ ասկէց առաջ ալ կառավարութիւնը շատ գէշ աչքով կը նայէր հայերու վրայ և կընէր գաղտնի ինչ որ կընար, սակայն հիմա յայտնի և որոշ կերպով կը գործէ պէտք եղածը — կողպուել զրպարտել, հայհոյել սպանել, թիրք խուժանը գրգռել և վերջապէս ընել այն ամենը, որ կընայ իւր մոնկոլ խելապատակէն հանել:

Բազար գիւղի գաւառակին գայմագամութեան մէջ կը գտնուի 25 հազար ժողովուրդ, որուն մէկ հինգերորդը միայն թիրք է: յայտնի է թէ հայերը բաւական զօրաւոր պիտի ըլլան, ուստի կառավարութեան զլխաւորներն ալ պէտք է ըլլան զօրաւոր, բիրտ ու վայրագ հայութիւնը ընկճելու, ջախջախելու և, եթէ կարելի է, փճացնելու համար: Բարձրագոյն իշխանութիւնը շատ իմաստութեամբ կը գործէ այս մասին և ո՞վ աւելի յարմարութիւն ունէր ասոնք ընելու, քան Բազարի լիւր գայմագամը: Այս վատ կենդանին չունի ուրիշ գործ. իւր զլխաւոր միակ գործն է հայութիւնը հալածել: Ի՞նչ հայերը, մանաւանդ Եթե-Նորգիւղ, Միջագիւղ և Չէնկիլիէր, իրարու այնքան մօտ գիւղաքաղաքներ, այնչափ բազմացած, բարեկեցիկ, զարգացած տեսնել...

Օգոստոսի մէջ, Սէօլէօզ, որ հազար տունէ աւելի հայաբնակ գիւղ մ'է, ուզեց աւարի տալ այդ գայմագամը, իրեն արբանեակ ունենալով Խալիլ ըսած գող և սրիկայ հարկահաւաք մը (Թահսիլ մէմուրի), որպէս թէ սէօլէօզցիները գողերու մասնակից եղած ըլլան: Շատ մը հարստահարութիւններ և բռնութիւններ ըրին և 20-25 մարդիկ ալ բանտարկեցին: Ասոր վրայ սեօ-

լեօզցիները զայրացած Պրուսա բողոքեցին. բայց արդիւնքը ոչինչ եղած է մինչ այսօր:

Պոլսոյ դէպքէն մի քանի օր վերջ, 2էնկիլէրէն Տըր-գատ, Պետրոս ըստած խեղճի մը 25, տարեկան տղան, որ հոյիւ էր Ագ-գէօյ թիւրք աղայի մը քով, չարաչար կը յօշոտուի թիւրքերէն. ընողը յայտնի է, բոլոր դիւզացիք գիտեն: 2էնկիլէրի մուսթարը կը դիմէ Եալօլայի Ալի պէյ միւստիին. սա թիւրքերէն հինգ ոսկի առնելով կը փակէ խնդիրը: Հայ սպաններ է. որու հոգմանաւանդ այս հայու դահիճ միւստիին համար: Այս դատաւոր կոչուած անձը, որ Պոլսոյ երեւելի թիւրք սրիկաներէն է, ոչ օրէնք գիտէ, ոչ կանոն. կատարեալ աւազակ, վայրենի մ'է, բառիս ճշգրիտ նշանակութեամբը:

Մէկ կողմէն Եալօլայի այս միւստիը, միւս կողմէն ալ Բազարի լիրբ գայմագամը, մասնաւորապէս կեցած են այս բազմահայ դիւզերը նեղելու, հարստահարելու և ի հարկին, փճացնելու համար: Հիմակ այս կողմերը ամեն ինչ գաղարման մէջ է. առևտուր, երթևեկութիւն իսպառ վերջացած է, ոչ ոք կը համարձակի դիւզերէն դուրս ելնել. մինչև անգամ լեռն երթալ փայտ բերելը կը վախցուի: Պոլսէն եկած լրագիր և նամակ կը գրաւին իսկոյն. հեռագիր չկայ հայու համար: Եալօլայի միւստիը իւր իշխանութեան տակ գտնուող թիւրք և յոյն դիւզերու է սն ա ֆ հայերը փակցուց, յոյն, թիւրք անոնց դէմ գրգռելով: Այլևս ուրիշ գործ չունին սուլթանին այս երկու հաւատարիմ պաշտօնեաները, իրենց գործը և խորհուրդը միմիայն հայերուն վրայ կը դառնայ:

Հոկտեմբեր 7-10-ին, Բազար-գիւղի գայմագամութեան հեռագիր հեռագրի վրայ կը զարնուի Պրուսա և Պոլիս, ըսելով թէ այս կողմի բոլոր հայերը գուլի վերցուցած են, թիւրքերուն ինչքը և կեանքը վտանգի տակ են, փութով գունդ մը զօրք ղեկի հոս. հասնիք կամ չը հասնիք: Մինչդեռ հայերու կողմէ ո՛ր և է բան պատահած չէր, մինչև հիմա ալ չէ պատահած: Զօրքերը կուգան. հայերու սարսափը մեծ է:

Հոկտ. 15-ին, Խալիլի առաջնորդութիւնով, զօրքերը խուժեցին դէպի Սիւրբ գիւղը, որ երկուհարիւր յիսուսից մինչև երեքհարիւր անուոր հայ գիւղ մ'է. իբր թէ ասոնք մի քանի օր առաջ գողերու հաց տուած ըլլան և իրենցմէ ալ մարդ կեցած ըլլայ գողերուն հետ: Հարկ չէ մի ան մի պատմել, ինչ որ պատահեցաւ զօրքերուն ձեռքով այդ գիւղին մէջ. ծեծ, թալան, աւերում, լլկում և որ ի կարգին: Խեղճ կիւրէցիներուն աղաչանքը, լացը, կոծը, ամեն ինչ ընդունայն կանցնի, վագրի ձեռքն ինկած են: 15-20 մարդիկ ալ այժմ բանտը կը հեծեն: Սիւրբցիներէն շատեր ուրիշ գիւղեր վաղթեցին:

Հոկտեմբեր 16-ի գիշերը, Նիկիայէն (Իզնիք) ժամ մը հեռի Տէր Բեյի ջաղացքին տէրը, չէնկիլէրցի Յովհաննէսը չարաչար կսպանուի թիւրքերէն: Չարագործները դուռը բացելուն պէս կրակ կընեն Յովհաննէսի վրայ. ընկերը, պարտիզակցի սէփէթճի Ստեփանը, տեսնելով վտանգը, կը յաջողի ջուրերուն մէջէն դուրս փախել և ազատել. վերաւորեալ զօրք կը բռնեն և ջաղացքին առջևի ծառին կսպան, վայրենաբար կը խողխողեն: Յաջորդ օրը Նիկիայի կառավարութիւնը կերթայ ոճրին տեղը և այդ աղբատներուն ունեցած

25-30 քիլէ ցորենը գրաւելով՝ իբր ք է շ ֆ ի յ է (քըն-նութեան ծախք), հրաման կընէ, որ սպանեալը թաղուի: Այս բանիս համար այժմ բանտարկած է սէփէթճի Ստեփանը: Զարմանալու ինչ կայ. թիւրք իշխանութիւնը դիւզացիական քաջութիւնով կը գործէ, երբ առիթը ներկայանայ ձերբակալել հայ անմեղ մը:

Յայտնի է, թէ թիւրք զօրքեր միայն հայերու համար կը ղեկին հոս, հոն: Ինչ ընէին այս զօրքերը իրենց քաջութիւնը փայլեցնելու համար, քանի որ այս գաւառը յատուկ ղրկուած էին: Իսլամի մը մազը ծռել, մահացու մեղք է, բայց կեանքուն ինչ անիրաւութիւն, ինչ տեսակ բռնաբարութիւն ալ ըլլայ, անոր ինչքը կողոպտել, զանիկ սպանել մեծ առաքինութիւն է: Ուրեմն պէտք է ասոնց գործելու ասպարէզ տրուի: Հիմա կառավարութեան ուշադրութիւնը բոլորովին դարձած է 2էնկիլէրի վրայ: Թիւրքերը կը մտածեն այս դիւզը նոր Սասուն մ'ընել, որ եթէ յաջողին, գաւառի հայութիւնը ընկճած պիտի համարին, մասամբ մ'ալ այնպէս է: Ուրեմն հարկ է 2էնկիլէրը աւերել:

Հոկտ. 24-ին, երեքշաբթի առաւօտ, դեռ չլուսցած, կարգադրութեամբ և առաջնորդութեամբ վերը յիշուած հարկահաւաք Խալիլի, 450-500 զօրքեր և պաշտպանուներ յանկարծ կը պաշարեն այդ աչքի փուշ եղող 2էնկիլէրը: ԱՏ ու սարսափ կը պատէ ամբողջ գիւղը: Հազարապետ, հարիւրապետ, յիսնապետ և միւս գլխաւոր պաշտօնեաներ կը մտնեն գիւղը, կը հաւաքեն և րեւելի մարդիկը և իրենց վայրագ եղանակով կը պահանջեն Ղիզէն օղու Մանուկը, որ գողերու ընկեր է, իրենց ըսածին նայելով, և միանգամայն աղտոտ հայհոյութիւններով սպառնալիքներ կը թափեն անոնց գլխուն: Ինչ ընեն, ո՛ր երթան, որո՞ւ դիմեն իշխանները: գիտեն թէ այս ոչինչ պատճառանք մ'է իրենց չար դիտաւորութիւնը ի գործ դնելու համար. փոքրիկ ընդդիմութիւն մը կամ չնչին առիթ մը կը փնտրեն գիւղին վրայ յարձակելու համար: Ամենուն արիւնը ցամքած և բոլորովին գունաթափ եղած են. ինչ ընել են, ինչ ըսելն չեն գիտեր: Եթէ ութ ժամ ասդին-անդին Մանուկ, կամ աւելի շիտակը, ժողովուրդին մէջէն չնչին առիթ մը փնտրելէ վերջ կը տեսնեն որ միայն աղաչանք, պաղատանք կայ, կը պահանջեն, որ գիւղի ամբողջ զէնքերը իրենց յանձնուի, հակառակ պարագային դուք գիտէք... Պէտք է ըսել, որ թիւրքեր, մասնաւորապէս կառավարութիւնը, այն համոզումը ունին, թէ գիւղին մէջ հազար հատէն աւելի մարթինի հրացան և անոր համեմատ ալ փամփուշտ կայ, ուրիշ զէնքերէ գատ. բոլորովին սխալ: Ատոր համար կստիպեն, կսպանան, որ զէնքերն յանձնեն: Այս միջոցիս, բնականաբար, մեծ յուզում կար Միջագիւղի և Մեծ Նոր-գիւղի մէջ, որ 200-ի մօտ անուոր ժողովուրդով հազիւ ժամ մը հեռաւորութիւն ունին 2էնկիլէրէն: Մեծ Նոր-գիւղի Զապրթան՝ հաճի Մուրադը, իսկոյն լուր կուտայ 2էնկիլէր հազարապետին, թէ Նոր-գիւղէն հինգ-վեց հարիւր մարդ օգնութեան կուգայ չէնկիլէրցիներուն և Միջագիւղէն ալ պատրաստ են անոնց միանալու: Ասոր վրայ բանը կը փոխուի. կը տեսնեն, որ իրենց չար խորհուրդը իդերև պիտի ելնէ, համարձակութիւնն ին կը կորուի և կսկսին մեղմութիւնով վարուիլ և այլևս չը կրնալով հոն կենալ, փողը հնչեցնելով՝ զօրքերը կը քաշեն կերթան: Հոս արժան է յիշել նաև որ, պա-

շարման ատեն, վարը, Բազար-գիւղ մեծ անձկութեան մէջ էին գայմագամ պէյը և իւր խորհրդական Տէճէպ գաղէ ԱՏմէզ ազան, թէ ե՛րբ պիտի լսէին հրացանի ձայները, որ աւելի օգնութիւն հասցնէին իրենց դիւցազուններուն և անհամբեր կսպասէին աւարով բեռնաւորած քաջ զինուորներուն վերագարծին:

Այս Բէճէպ օղլի կոչւած աւազակը հայերու փողովը, աջակցութեամբը այդ դիրքը գրաւած է:

**Թ Ռ Ո Ւ Յ Ի Կ Թ Ե Ր Թ**

№ 2 Հ. Յ. Դ Ա Շ Ն Ա Կ Յ Ո Ւ Թ Ե Ա Ն № 2

5 Փետր. 96 Վ Ա Ս Պ Ո Ւ Բ Ա Կ Ա Ն Ի 5 Փետր. 96  
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՕՄԻՏԵԻ

**Ժ Ո Ղ Ո Վ Ր Գ Ի Ն**

Սուլթանական յանձնաժողովը թնդանօթների որոտմամբ մտաւ Վան բարենորոգումները գործադրելու:

Մեր աչքով տեսանք, թէ այդ բարենորոգումները կեղծ են, խարդախ, իսկ հետեւանքը՝ գետերով արիւն:

Հայ ժողովուրդը, մի՛ հաւատար, մի՛ խաբէիր դայլերէն: Կարին եւ Տրապիզոն ասպտակեցին խարդախ բարենորոգիչ Շաքիր փաշային: Իսկ դու Վան, ահա փորձութեան ծանր րոպէն առաջդ է. պատուով եկ դուրս կուից. ամօթապարտ ետ դարձրու կայսերական յանձնաժողովը. մի՛ զիջանիր նրա եւ ոչ մի՛ բռնի պահանջին:

Ամբողջ Տաճկահայաստանը սուգ է կապել. նա՛ հայ ժողովուրդը ջարդած՝ փշուած է. նա՛ հայը անարգւած է, մերկ, սովատանջ, թափառական:

Այս բոլոր թշուառութեանց հեղինակը՝ ինքը, գաղան սուլթանն էր. եւ այսօր, այդ անխիղճ բռնակալը իր յանձնաժողովի բերնով քարոզում է մեզ հաշտել իր հետ երբէ՛ք:

Այս ոտբասիների առջեւ, ուր Հայրենիք արեան ծով է դարձած, եւրոպական դիպլոմատիան էլ կը ծաղրէ մեզ. կսպասէինք անգութ լինել, բայց բարոյապէս ընկած՝ ոչ: Մենք ոչինչ չունինք շարտելու. այդ լկտի դիպլոմատիայի երեսին, բայց եթէ մեր խորին զգւանքն ու արհամարանքը:

Հայեր, ծանր ճգնաժամի մէջ ենք: Ոճրագործ սուլթանը իր անթիւ կոտորածներով եւ ամբողջ կառավարչական րէժիմով, ընկած է մեր կրծքի վրայ, ինչպէս կապար Այո՛, մենք ջախջախւած, մենք տխուր, վիրաւոր, բայց ընկճած՝ ո՛չ երբէք:

Հաշտութիւն չկայ: Մենք զէնքը վար չենք դնի, մեր սրբազան կռիւր կայ ու կը շարունակուի աւելի կատաղի:

Թո՛ղ կորչի ուրեմն, անարգ բռնակալի յանձնաժողովը. նրան ոչ մի զիջում: Մենք յեղափոխականներ ենք, մեր վերջին խօսքը՝ Մա՛հ կամ Ազատութիւն:

Կեցցէ՛ հայ ժողովուրդը,

Կեցցէ՛ Յեղափոխութիւն:

ՆՆՈՐԱՏԻՈՒԹՈՒՆՆԵՐՈՒ ՑՈՒՑԱԿ

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Կեդրոնական սնդուկի մէջ ստացւած են.

Երկաթ ևս 25 օսմ. ոսկի, Վառարան 10 օսմ. ոսկի, Պ. Գասապեան 10 օսմ. ոսկի:

Կայծակից 104 ռուբլի, Բժշ. 100 ռուբ., Օսկա գիւղի կանանց խմբից 100 ռուբ., Կայծակից 8 ռուբ., Շանթից 15 ռուբ., Ճառագայթից 25 ռուբ., Ամրոցից 10 ռուբ., Կայծակից 22 ռուբ.:

Արարատ Կօմիտէի մէջ ստացւած են.

Քաղաքից 407 ռուբլի 55 կոպէկ, յԽարխուսից՝ 60 ռուբ., Տիկ. Խ-ից 30 ռուբ., Կը-ից 38 ռուբ. 28 կոպ., յԿարիձից՝ 77 ռուբ., Օր. օր.-ից 33 ռուբ. 60 կոպ., Ե. Ա. միջոցով 11 ռուբ. 70 կոպ., Աշ-րից 14 ռուբ.:

Բայոնից Էջ-ից 50 ռուբլի, Ղժ-ից 158 ռուբ. 40 կոպ., Ն. Բզ-ից 108 ռուբ. 30 կոպ., Դշա-ից 15 ռուբ., Ախ-ից 16 ռուբ., Դվ-ից 7 ռուբ., Աշտ-ից 20 ռուբ., Բշ-ից 13 ռուբ. 80 կոպէկ:

Վիշապ քաղաքի Կեդրոնական սնդուկի մէջ ստացւած են.

Օձէն Կ. Թ. 20 դճ., Կ. Ա. 20 դճ., Հ. Կ. 20 դճ., Յորեն 20 դճ., Գրգուռ 10 դճ., Յ. Յ. 20 դճ., Յօնիկ 10 դճ., Յակոբ 20 դճ., Կօշիկ 216 դճ., Արաքսի 300 դճ., Սափրիչ 40 դճ., Տ. Պ. 10 դճ., Հ. Յ. Ի. 10 դճ., Ն. 2. 5 դճ., Գ. Փ. 10 դճ., Ստեփան 80 դճ., Կ. Մ. 40 դճ., Տ. Կ. 108 դճ., Տ. Ն. 20 դճ., Հայկուհի 60 դճ., Կ. Ա. 20 դճ., Սարգիս 20 դճ., Ա. Շ. 10 դճ., Յ. Շ. 10 դճ., Մ. Պ. 8 դճ., Կ. Կ. 40 դճ., Սըրց 540 դճ., Ատաղձագործ 40 դճ., Հայրապետ 40 դճ., Կարապետ 20 դճ., Յ. Պ. 40 դճ., Բարեկամ 60 դճ., Կօշկակար 10 դճ., Աբիսս 108 դճ., Անդրանիկ 4 դճ., Ա. Ջ. 40 դճ., Խ. Մ. Ա. 54 դճ., Ա. Մ. Փ. 10 դճ., Մ. Թ. Փ. 20 դճ., Հիւան 10 դճ., Շաչէն 30 դճ., Վ. Գրիգոր 10 դճ., Խ. Ն. 10 դճ., Թ. 216 դճ., Յ. Ե. 20 դճ., Տիրուհի 100 դճ., Մ. Պ. Յ. 80 դճ., Արիւն 20 դճ., Դերձակ 4 դճ., Մ. Տ. 4 դճ., Յ. Ա. 5 դճ., Պահարան 540 դճ., Բարեպաշտ 80 դճ., Գրիշներ 800 դճ., Վահագն 40 դճ., Արամայիս 80 դճ., Արմաւիր 20 դճ., Թնդանօթ 20 դճ., Մ. Կ. 20 դճ., Թըքատեաց 50 դճ., Մ. Ա. 5 դճ., Ածուխ 40 դճ., Աշխատող 27 դճ., Սըրց 28 դճ., Վահագն 20 դճ., Ա. Յ. 10 դճ., Թնդանօթ 30 դճ., Արիւն 1080 դճ., Թըքատեաց 80 դճ., Գայլ 8 դճ., Արծիւ 40 դճ.:

Դաշնակցութեան անձամօթներից խնդրում է թղթակցութեան եւ ներատուութեան համար ղեմել:


Armène-Gaspar, poste restante, Carouge (Suisse)

L. Boole, 19, Russell Road, Kensington, London W.

Վիեննա, Դաշնակցութեան ազատ տպարան:



# ԴՐՈՇՆԻԿ



„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

## Ն Ո Ր Դ Ի Մ Ա Կ Ը

Յայտնի է, որ Սուլթանի կառավարութիւնը ներքին նահանգներում կոտորածներ առաջ բերելու համար, Շաքիր փաշային ուղարկեց օգնականներ, որոնց միսիան կայանում էր նրանում, որ պիտի մանէին տաճիկ ամբոխի մէջ և նրան գրգռէին հայ ժողովրդի դէմ:

Այդ գործակալները իրենց միսիան յաջողութեամբ կատարեցին.— հայ ժողովրդի դէմ հանեցին ծածկահասցատանի մահաբերական ժողովուրդը և զինուորների աջակցութեամբ կոտորած արին. այդ գործակալները մրտան ժողովրդի մէջ իբրև սօփոսներ: Այժմ երբ թէ արտաքին և թէ ներքին հանգամանքները փոփոխելու նշոյլներ են ցոյց տալիս՝ ոչ յօգուտ սուլթանական կառավարութեան, լէշակերը մի այլ միջոց է ընտրել նորից սարսափեցնելու հայ ժողովուրդը, որպէսզի սուլթանի համար այս աննպաստ պայմանում նա ձայն չըհանի ու լուռութեամբ տանի դժոխքի կրակը:

Ընդհանուր կոտորածից յետոյ, տաճիկ ժողովրդի մէջ սկսել է հակահառավարչական ձգտումներ արտայայտել. դառն փորձը սկսում է նրան՝ տաճիկ ժողովրդին համոզել, թէ որքան մեծ սխալ է արել՝ նպաստելով լէշակերին նրա ծրագիրը իրագործելուն մէջ. նա այժմ դառնութեամբ տեսնում է, որ դրանով քանդել է և իւր տունը, երկիրը տնտեսապէս մեռցրել է— ոչ արդիւնագործութիւն և ոչ էլ արտահանութիւն, որի հետևանքն է տնտեսական թշուառութիւնը՝ աղքատութիւնը, սովը: Այժմ նա, քիչ բացառութեամբ, երկու ձեռքով ծեծում է գլուխը ու ողբում իւր թշուառ գոյութիւնը:

Ողբան էլ որ իւր հարևանի գործած յանցանքը թանգ նստած լինի հայ ժողովրդին, բայց և այնպէս երևոյթը միխթարական է: Միխթարական է, որ տաճիկ ժողովուրդը զգում է իւր գործած մեծ յանցանքը և ջանքեր է անում մտանալ մեզ աշխատում է իւր թո-

ղած սև յիշատակը անհետացնել... որովհետև տաճիկ ժողովրդի և առհասարակ երկրում ապրող ժողովուրդների բարեկամութիւնը, համակրութիւնը ու աջակցութիւնը մեր ներկայ կուռի համար յաջողութեան պայմաններից մէկն է, նոյնպէս յեղափոխական դործի յաջողութեան առհասարակ:

Ներկայ ընթացի տակ գտնուող ժողովուրդները, ճիշտ է, ոչ համահասարակ կերպով, բայց և այնպէս տանջուած, կեղեքուած են: Այդ ժողովուրդների փրկութեան ճանապարհը մի է— յեղափոխութիւնը. այդ ժողովուրդների կեանքն ու պատիւը ապահովող պայմանը նոյնպէս մի է— ժողովրդական-ուսմկավարական կառավարութիւնը: Թշնամին լինելով մէկ, դրանից ազատելու ճանապարհը և նպաստաւոր հետևանքի հասնելը լինելով նոյնպէս մէկ, պարզ է, որ այդ դժգոհ տարրերի համերաշխ, մի ընդհանուր ծրագրով գործելը ունի շատ մեծ առաւելութիւններ. սրանով կուող տարրերը ու ժեղանում են և յաղթող հանդիսանալու շանսն էլ կրկնապատկուած է:

Դաշնակցութիւնը իւր գոյութեան օրից լաւ ըմբռնելով այդ, առանձին ուշադրութիւն է դարձրել դրա վրայ և մինչև իսկ փորձեր է արել նա իւր օրգանի մէջ՝ «Դրօշակում» մի քանի յօդուածներով այդ հարցը շօշափել է, հրաւիրելով հայ յեղափոխականների ուշադրութիւնը դրա վրայ: Եւ մենք միայն կարող ենք ցուել, որ շատ աննպաստ պայմաններ չպակեցին «Դաշնակցութեան» ձեռնարկութիւնը՝ ներկայ կուռի մէջ մտցնել երկրի միւս ազգաբնակչութիւնները ևս կամ գոնէ չէզօքացնել նրանց թշնամական վերաբերումը, մանաւանդ, որ տաճիկ յեղափոխականները ներկայ կուռում ձեռնպահ էին մնացել. միայն վերջին ամիսներումն է, որ նրանք սկսել են շարժել և այս հանգամանքը յեղափոխական շարժմանը ու միացած ուժերով գործունէութեան նպաստաւոր է: Միայն կեանքի դառն փորձն է համոզում երկկայ թշնամուն այսօր մտանալ իւր հարևանին և ողբալ իւր յանցանքը: Դառն փորձը նրան համոզեց, որ հայը իւր թշնամին չէ, որ իրենց շահերը համերաշխ են և որ ի ս կ ա կ ա ն թշնամին ներկայ ընթացի է իւր ձեղաւորութեամբ: Երևոյթը միանգամայն հակառակ է սուլթանի կառավարութեան շահերին այն տեսակէտից, որ բացի այն,

որ մի ոյժ, որի վրայ հենւած տէրրորի էր ենթարկուած դժգոհ տարրը—Տայ ժողովուրդը, այսօր ոչ միայն այդ ոյժը իւր տրամադրութեան տակից դուրս է գալիս, այլ և նա անցնում է իւր թշնամու կողմը: Այս դիպակում իրաւ որ հարւածը մահացու կարող է լինել և լեշակերի մահուան օրերը կարելի էր լինի մաթեմատիկական ճշտութեամբ հաշուել...

Եւ իրաւ, ի՞նչ էր մնայ անել այդ գծուծ թշուառականին, այդ Մեծ-Ոճրագործին, եթէ տաճիկ ժողովրդի մեծամասնութիւնը անցնի Տայ ժողովրդի կողմը ու յեղափոխական դրօշակի տակ, ձեռք-ձեռքի տւած կուրի դարշելի ըէժիմի դէմ, որ ոչնչացրեց երկրի կեանքի աղբիւրը, նրան անապատ դարձրեց և տասնեակ հազարաւոր մարդկային արարածներ մատնեց ծայրայեղ թշուառութեան: Այդ պոռնիկը ընդունակ է այդ տեսակ ուժի դէմ պատուաւոր կուր մղել և պատուաւոր մահով մեռնել. նա, յատուկ իւր բնակութեան, կը դիմի մի այլ ստոր միջոցի և արդէն առաջի փորձը անում է: Լեշակերը նկատելով, որ տաճիկ ժողովուրդը սկսում է իրենից երեսը շուռ տալ ու մօտենալ Տայ ժողովրդին, որ նրա դժգոհութիւնը դէպի ինքը աճում, զարգանում է, իսկ դէպի յեղափոխական տարրը համակրանք տաճում, նկատելով, որ ինքը այլևս անգոր է այդ հոսանքը կանգնեցնել քանի որ դա կեանքի դառն փորձի արդիւնքն է, աշխատում է միշտ լարւած ու բաժան բաժան պահել երկրում ապրող տարրերը: Եւ ահա նա տաճիկ ժողովրդի այդ տրամադրութիւնից յաջող կերպով օգտուելու համար, իւր գործակալների դիմակը փոխում է—վերցնելով սօֆտայիւրը, տեղը դնում է յեղափոխականին:

Երէկայ սօֆտաները այսօր յեղափոխական են դարձել և այժմ այդ միջոցով են ուզում տաճիկ ժողովրդին մի նոր ոճիր գործել տալ: Դրանք այժմ աշխատում են համոզել տաճիկ ժողովրդին մի նոր կոտորած անել, հաւատացնելով, որ Եւրոպան կը միջամտէ հայերին պաշտպանելու համար և կը մոցնի երկրի մէջ բարեփոխութիւններ, որից բնականաբար կօգտուին իրենք ևս: Սուլթանի կառավարութիւնը իւր այս հրէշային նոր տակտիկայով, իւր նոր դիմակով ուզում է միանգամից երկու գործ անել. նախ որ իրեն համար աննպատակ պայմաններում կը լուսնէ բողբոջ ձայնը և երկրորդ՝ այս անգամ էլ կազատուի ծանր պատասխանատուութիւնից, յանցանքը ձգելով տաճիկ յեղափոխականների վրայ: Խաղը ձարպիկ է ու նպատակայարմար: Եւ որպէսզի մի նոր ոճիր տեղի չունենայ և այժմ էլ յանուն յեղափոխականների, մենք հրաւիրում ենք տաճիկ յեղափոխութեան լուրջ ուշադրութիւնը, անմիջապէս միջոցներ ձեռք առնել, պրօֆլամացիաներ հրատարակել զգուշացնելու ժողովուրդը, խաղալիք չդառնայ լեշակերի ձեռքին, զգուշացնել

նոր ոճիր գործելուց, այլապէս այդ այս անգամ շատ թանգ կարող է նստել՝ թէ մեզ և թէ իրենց այլևս ցանկալի միութիւնը, համերաշխութիւնը ու փոխադարձ անկեղծութիւնը կը ոչնչանայ ու թշնամական յարաբերութիւնը աւելի լարւած բնակութիւն կառնի, որից կօգտուի միայն այսօրայ ուզուրպատօրը, ժողովուրդների արիւն ծծողը. պէտք է գործ դնել ամեն միջոց հաշտեցնելու երկրում ապրող ժողովուրդներին, քանի որ այդ է պահանջում նրանց շահերը: Թամանակ է, որ տաճիկ յեղափոխականը օգտուի հանգամանքից ու հասկացնի ժողովրդին, որ Հայկական Յեղափոխութիւնը նեղ, էգօյիստիքական չէ, որ նա ընդհանուր բնակութիւն ունի—գրանից օգտուելու են համա հաւասար կերպով երկրում ապրող ժողովուրդները. ժամանակ է, որ նա հասկացնի խաբւած տաճիկ ժողովրդին, որ հայի մղած կուր իւր դէմ չէ, այլ նրա դէմ, որից կեղեքում է և ինքը: Այս նրա բարոյական պարտքն է, այս պահանջում է երկրի ու ժողովուրդների շահերը:

Մենք լիակատար յոյս ունինք, որ տաճիկ յեղափոխականները կշտապեն օր առաջ պատուել այդ դիմակը և թշնամու իսկական գոյնը ցոյց կը տան ժողովրդին. թէ չէ նա շատ ծանր և աղետալի հետեանքներ կարող է ունենալ, ինչպէս յեղափոխական գործի, այնպէս էլ երկրի շահերի ու ժողովուրդների փոխադարձ յարաբերութեան համար: Դա ամենալաւ զէնք է մեր թշնամու ձեռքին միշտ լարւած ու բաժանած պահելու երկրի տարրերը. մինչդեռ որպէսզի հնարաւոր լինի շուտով ազատել այդ գարշելից, անհրաժեշտ է, որ մենք ձեռք ձեռքի տանք ու կուռնք նրա դէմ և նրա գերեզմանի վրայ կանգնեցնենք ազատութեան արձանը, որը իր հետ բերելու է հաւասարութիւն ու եղբայրութիւն:

*Հոսեա*

Ն Ա Մ Ա Կ Վ Ա Ն Ի Յ

27/10 մարտի, 96 թ.

Վանը դարձեալ տագնապի մէջ ընկաւ: Խանութները, որ աներես հարուստները կարողանում էին կիսով չափ բանալ տալ, այժմ բոլորովին գոց են: Սուլթանական բարենորոգիչ յանձնախումբը մէկ ամիս է ձեռքերը ծալած՝ Վան նստած է և գաղտնի դաւեր է լարում քաղաքի համար: Յանձնախումբը քաղաք մտնելուն պէս «Դաշնակցութեան» Վանայ կեդրոնական կոմիտէն մի «Թուուցիկ թերթ» հրատարակեց՝ № 2-րդ, որը ահագին յուզում առաջ բերաւ: Նա միանգամայն դէմ էր որ և է կերպ համակերպիլ խարդախ, կեղծ բարենորոգումների փշրանքներին: Ազդեցութիւնը ակն

յայտնի էր. ժողովուրդը իրեն հեռու պահեց: Սակայն մի քանի դաւաճան հարուստներ ետեւից քաշելով մի քանի միամտներ, փորձում են սուլթանի ոտները լիզել ու համաձայնիլ. տեսնենք: Փետրուար 25-ին հրատարակեցաւ № 3-րդ «Թուրքիկ թերթը», որով դիմում եղաւ, խիստ կերպով, այդ լրբերին: Հետեւանքը շուտով յայտնի կանէ: Քաղաքի շուրջը՝ աջ ու ձախ զօրքերն ու քիւրդերը հայ են սպանում. օր չի անցնում՝ որ սպանութիւն չլինի: Գաղտնի զօրք լցած է Վան. առաջ 800 էր, այժմ 4000-ի է հասնում. սպասում են բարենորոգումներ գործադրող՝ Շաքիր փաշային:

Գաւառների կողպուած հայերը խումբ խումբ լըցւում են քաղաք: Գաղթականների թիւը 3000-ից անց է:

Ամսոյս 16-ին, գիշերը, «Դաշնակցութեան» հայդուկային խումբը մի տեղից միւս տեղը անցնելուց, հանդիպեց գիշերապահներին. ընդհարում տեղի ունեցաւ. հայդուկները մի զինուոր գլորելուն պէս, սուլթանի հաստարիմները փախան. մի զինուոր էլ վիրաւորուած է:

## Կ Ո Տ Ո Ր Ա Շ Ն Ե Ր

Մ Ո Ւ Շ

(Վ Շ Ր Զ)

20/1 նոյեմբեր

Մշոյ աղքատ դասակարգը, որ օրական աշխատութիւնով իր օրապահիկը կը հայթայթէր, սովամահ վիճակի մէջ է. և եթէ ընդ հուպ ազդու միջոցներ ձեռք չառնէին, Մշոյ դաշտի բոլոր գիւղերը և քաղաքը շուտով աւերակ կը դառնան. սկսած են արդէն Մշոյ վիճակներուն և դաշտին մէջ սպանութիւնք և աւարառութիւնք:

Հոկտեմբեր 14-ից մինչև հիմա հետեւեալ սրտաճրմիկ դէպքերն են տեղի ունեցած մեր շրջակայ գիւղերու մէջ. —

2 ու խ ու լ Ր ա յ Վ ա Ր դ ե ն ի ս գ ի լ շ .— Բաղկացած է 150 տունից: Հոկտ. 16-ին, գիշերը, բալակցի, խոյթեցի և չխուրցի թիւրք աշիրներ վրան յարձակելով, բոլոր տուններու կահ կարասիք, արմտիք և ամբողջ անասուններ թալանեցին. գիւղը ամայացած է, բնակիչները ցրւել են, թէ սրէ անցեր, յայտնի չէ: Իրենց դաշտին մէջ կը գտնուին փոքրիկ երեխաներ. ոմանք դէս ու դէն կը վազեն իրենց մայրերը գտնելու, ոմանք էլ շնչասպառ գետին են ինկած:

Գ Ր մ ի Ր դ .— Նոյնպէս նոյն աշիրներէն թալանուած է և գիւղը բոլորովին ամայացած, բնակիչները անյայտ են:

Ա լ ի -Գ լ Ր ո ն .— Ոչխարները տարեր են քրդերը և բնակիչները փախել են Թել գիւղ:

Հ ա ո ն ի ս տ .— Ամբողջովին թալանուած է և ամբողջ բնակիչներ անյայտացած են. միայն դաշտէն մի քանի շնչասպառ երեխաներ հաւաքել և Ավզաղբիւր գիւղ տարել են. չորս մարդու դիակ միայն գիւղի փողոց-

ներին մէջ կերուին եղեր:

Ա վ զ ա ղ բ ի լ Ր , Ա Ր դ ո ն ք և Խ ա Ր ս .— Այս երեք գիւղեր պաշարման վիճակի մէջ են, որոնց մասին ուրիշ ու է է տեղեկութիւն չունինք:

Ա լ Ր ա ն .— Երկու մարդ սպանեցին և երեքը վիրաւորեցին, աւար առին 150 ոչխար և 150 տաւար չէրքեզներ և ճիւղանցի քիւրդեր:

Ց ը խ ա ո լ .— Աւար տարին 22 գոմէշ և 22 ոչխար: Գ ե Ր ը կ .— Գիւղին ամբողջ ոչխարը տարին:

Ա լ ի ճ ա ն .— Քիւրդերը յարձակում. ըրին գիւղին վրայ, բայց չի յաջողելով մի բան տանել, գիւղին բոլորտիքը գտնուած խոտի դէզերը այրելով հեռացան:

Բ ք լ Ե ո լ .— Գիւղի ոչխարը ամբողջովին տարին:

Հ ա ց ի կ .— Աեց եղ և հինգ կով տարին առաջի գիշերը, երկրորդ գիշերն ալ յարձակում ըրին, բայց չի յաջողեցան աւար առնել:

Բ Ո Ւ Ա Ն Ը Գ Ւ վ ի ճ ա կ ի ն մ է ջ հ ո կ տ . 15-ից մինչև 17 կէս օրին պատահած դէպքերը հետեւեալներն են.

Վ ո ջ ա կ գ ի լ շ .— Ալէի Գէորդ անուն անձը երկու զաւակներով վիրաւորուած և մին մեռած է, որու անունն է Մոսո. գիւղը բոլորովին թալանուած է, անասուն, արմտիք և կարասիք: Գիւղը այժմ ամայի է, բընակիչները դէս ու դէն ցրւած են: Երեցու Յակոբ անուն անձը, որ գիւղի ամենահարուստն է, իր ունեցած բոլոր հարստութենէ անցած է, միայն պատրաստի դըրամը 1000 լիրա օսի. և 3000 արծաթ մէճիտիէ խուրճի մէջ լեցրած ձիով փախչելու ատեն՝ իրենց գիւղը թալանող համագիւղացի շէյխերը ետեւէն կիսնան զինք սպանելու և դրամը կողպտելու մտադրութեամբ. խեղճ մարդը իր կեանքը ազատելու համար, խուրճը ձիէն վար ձգելով, հագու կը յաջողի փախչել և իր կեանքը ազատել:

Բ Ր ք ա շ է ն .— Թալաներ են ամբողջ կարասիք, արմտիք և անասուններ. ժողովուրդը դէս ու դէն ցրւել են. գիւղը բոլորովին անմարդաբնակ է դարձեր:

Լ ի ջ .— Մաքսուտեան Աւան վարժապետը և ուրիշ հայ մը, Այաղ անունով քիւրդի ձեռքով սպանելէ յետոյ, գիւղը բոլորովին թալանուեր է:

Խ ո շ կ է լ զ ի .— Մի հայ սպանած և գիւղին ամբողջ ոչխարին հօտը աւարի են տարած:

Հ ա տ կ ա ն .— Գասպարի եղբայրն սպաննած և գիւղի ոչխարն յափշտակած են:

Հ ա մ զ ա շ է յ խ .— Ղազարի որդի՝ Նատոն սպանուած է:

Վ ո ջ ա կ .— Թալանուած է: Նաև մշեցի Մելքոնեան Ալէքսան անուն վաճառականը, որուն բոլոր ունեցածը տարեր են. 400 լիրայի ապրանք, 120 քիլէ ցորեն և 8 լիտր իւր:

Վ ա Ր դ ո վ ի վ ի ճ ա կ ի ն մ է ջ գ տ ն ւ ա ծ բ ո լ լ օ Ր հ ա յ գ ի լ շ երը պաշարուած են քիւրդերէ, անասունները հօտերով աւարի տարած են. բայց խեղճերը ոչ կարող են քաղաք գալով բողոքել և ոչ ալ ինքզինքնին պաշտպանել:

Ամեն օր շարունակ աղետալի լուրեր կը հասնին Մշոյ առաջնորդարան և թշառ ժողովուրդը պաղատագին առաջնորդարանէն օգնութիւն կը խնդրէ: Մինչդեռ առաջ փոխանորդ հայրը և ժողովականներն աւմեն օր ի նիստ կը գումարեն և կը խորհրդակցեն այս տագնապալից աղետին դարման մը գտնելու համար, բայց սարսափահար կը լինին, երբ կը տեսնին իրենց

անկարողութիւնը սպառնացող կորստաբեր վտանգին դէմ կառավարութիւնը հեռագրատան գուռը փակած է առաջնորդարանին դէմ, որ գոնէ ժողովուրդին այս կացութիւնը պատրիարքարանին ծանուցէի:

Յ. Գ. Նամակս փակելու րոպէին հետևեալ տեղեկութիւններն հասան. —

Ա. Բ. քա վա ն. ք. — Բոլորովին թալանւած է:

Մ. Կ. ր ա գ ո մ. — Երջակայ բալաքցի քիւրդերէն թալանւած է և բնակիչները ցրւած են:

Ա. Կ. Լ. ք ա հ ա ր. — Կողպուած և բնակիչները ցրւած՝ Զօրավիգ գիւղ պայստանած են: Զորս գեղեցիկ կիներ առևանգեր են քրդերը:

Խ ա շ խ ա Լ Գ ա Ղ. — Խոտի դեղեր հրոյ ճարակ արին քրդեր:

Ս օ ր դ ա ր. — Աւար տարին 140 ոչխար:

Մ ե Ղ դ ի. — Աւար տարին 110 ոչխար:

Ս ա ս ու ն. — Երջակայ աշիրներ կը պատրաստին յարձակում գործելու, ինչպէս հասած լուրերէն կը հաստատուի՝ պատրաստութիւնը մեծ է և այդ խեղճ ժողովուրդի մնացած մի մասն ալ բնաջինջ ընելու մտադրութիւն կայ:

Ս օ ր դ ա ր. — Ամբողջ տաւարի նախիրը տարին, որ 323-ից կը բաղկանայ:

Ս. Մ ա տ ն ա վ ա ն. ք. — Յափշտակեցաւ տաւարը և կողպուեցաւ կարասիք, սէյդանցի աշիրների ձեռքով:

Մ ա ո ն ի կ. — Այս գիւղի բնակիչները վախերնուն փախեր և Հաւատորիկ պայստաներ են, հետեքնին բերելով միայն անասունները:

Հ ե ր է ե ր տ. — Թալանւած են կահարասիք և անասուններ:

Հ ե թ ի ն. ք. — Որ Սասնոյ գաւառի անցեալ տարւայ աւերակ դարձած գիւղերն մէկն է, դարձեալ թալաներ են և ունեցած արմախքն ու նոր պատրաստած կարասիքն բոլորովին տարեր են:

Սրտաձկիկ լուրերն անդադար կը հասնին և եթէ հանգամանքները ներէին, նոր դէպքերի տեղեկութիւններով մի թերթ, ևս մի քանի ժամայ մէջ լեցւելուն կասկած չկայ: Համաճարակը խիստ արագութեամբ տարածւելու վրայ է, շնորհիւ տիրած անիշխանութեան. յուզումը հետզհետէ սաստկանալու վրայ է քաղաքիս մէջ, ինչպէս կերևի աղետալի վախճանը մօտ է, վաճառանոցները տակաւին չեն բացւած և շուտով ալ բացւելու յոյս չկայ:

Խ Ն Ո Ւ Ս  
II

Քիւրդերի գլխաւոր աշիրները, Գաւառիներ, որոնք բնակում են Գեօկ-Սու, Թոքման, Աեռնակ և այլ տեղեր, հետևեալներն են. — զուրկցիք, 7-800 ձիաւոր Ղուլի բէկ ցեղապետի հրամանի տակ, հասանան Բաբա բէկի հրամանի տակ՝ 8-400-ի չափ ձիաւոր Չիբբանցիք, Սէլիմ բէկի հրամանի տակ՝ 5-600 ձիաւոր, Բացի վերոյիշեալները, կայ մօտ 8-900 հետևակ քիւրդ խուճան՝ բաղկացած զանազան աշիրներից, միացած 150-200 չէքքեզների հետ, որոնց

առաջնորդում են շէյխ Ահմատ, Օմարի տղայ Սառոն, Բրօյե Աւսօ, Մըհմէդ, Նասօ և իւր եղբայրները և մի քանի ուրիշները, որոնք ամբողջ գաւառի մէջ ձանաչում են՝ բարբարոս, անգութ և կատաղի արիւնքուշա աւազակներ:

Այս բոլոր խոսնիճաղանճ բազմութիւնը, զանազան խմբեր կազմած, ամեն կողմից յարձակում են այս ու այն գիւղի վրայ օրը ցերեկով, կողոպտում, թալանում, աւերում, սպանում և անհաշիւ կողոպուտներ անելուց յետոյ հեռանում են, առանց մի որ և է ընդդիմադրութեան պատահելու, առանց մի վախ ունենալու: Այնպէս որ հոկտ. 20-ից մինչև 27-ը Խնուսի յարձակում կրած գիւղերը ներկայացնում են ամայութեան և անմարդաբնակութեան մի տեսարան: Ահա իւրաքանչիւր գիւղի միայն մնասւածների և սպանւածների համաճառ հաշիւը, որովհետև հնարաւորութիւն չունեցայ ստուգելու իւրաքանչիւր գիւղում՝ ո՞րքան անասուն, ո՞րքան հացահատիկ և տնային կահ կարասիներ ու ստացւածքներ են տարւած:

Բ ու ո ն ա զ. — 25-30 տուն. սպանւած են 22 երիտասարդ և հասակ առած մարդիկ, վերաւորւած են 13, անյայտ են 7 հոգի, որոնց մէջ կան 3-7 տարեկան մանուկներ: Ամբողջ գիւղում ոչ մի բան չէ մնացել. աներից մեծ մասը վառւած է, բնակիչները զորկւած բոլոր կայքից, մերկ, քաղցած, թափառում են այս և այն կողմ:

Ղ ա ր ա - Բ է օ փ ը ու. — 80-90-ի չափ տուն ունի, որոնցից սպանւած են 3 հոգի, վերաւորւած է վախից մեռած են 2 հոգի. բացի հացահատիկներից միւս բոլոր ստացւածքները և կայքերը յափշտակւած են: Մինչև հիմա էլ այս գիւղում են քիւրդ նշանաւոր աւազակներ՝ Փախի Ահմէտը և Մըհմէդը, որոնք գիւղացիներից պահանջում են 150 լիւրա և բացի այն երեք հրացանները, որոնք խլել են գիւղացիներից, նորից ուղում են 5-ը. պահանջում են նաև այն երիտասարդներին, որոնք վախից չկարողանալով մնալ գիւղում, հեռացել են: Գիւղացիներից մի քանիսը գանգատուել են դայմագամին և խնդրել, որ ինքնակոչ հիւրերին հեռացնէ գիւղից: Գայմագամը բաւականացաւ դանդաւանողներին բանտարկելով:

Մ ա ր ու Ֆ. — Մարուֆը ունի 30-40 տուն: Այդտեղ սպանւած են 4 հոգի, յափշտակւած է 70-ի չափ տաւար և մի քանի տան կահկարասիներ, որ գիւղացիք Մարուֆից փախցնելիս են եղել Հարամիկ գիւղը: Սպանւած 4 հոգին էլ դրանցից է լինում: Պէտք է խոստովանել, որ Խալո բէկ, բալակցի Համիդէյի գայմագամը օրինակելի կերպով պաշտպանում էր Մարուֆ և Գուլան գիւղացիներին և եթէ Մարուֆից կան ըսպանւածներ, պատճառը նրանց Խալո բէկին չզտահանալը և գիւղից փախչելն է լինում, սրանք Հարամիկ գիւղում թալանւում և սպանւում են հարամիկցիների հետ: Իսկ երբ Հաքիր փաշան երկրորդ անգամ այսինքն ամսոյս սկիզբները եկաւ Խնուս, այդ Խալոյին, ոչ միայն մերժել էր իւր ներկայութիւնից, այլ ինչպէս ասում են սպանուանցիլ էր:

Շ ա բ ա դ ի ն. — Շարագին ունի 60-70 տուն, ամբողջովին թալանւել ոչ մի բան չէ մնացել գիւղում, բացի մի քանի հորթերու լեցւած հացահատիկներից, որոնց թշնամին չէ կարողացել գտնել:

Ք ա Ղ ք ի կ. 100 տուն: Սպանւած են 11 հոգի, վախից մեռած 1, վիրաւոր 5 հոգի. բացի մի քանի ա- նասուններից, ամբողջովին յափշտակւած է: Գիւղացի- ները փախչում են Չաւուրմէ գիւղը, այնտեղ մնում են 8 օրից աւելի. այդ ժամանակում քիւրդ խուժանը տներից թալանում է ամեն մի բան և անխնայ կտորը- տում, ինչպէս ամեն տեղ այստեղ էլ նոյնպէս, բոլոր պատահած իրեղէնները:

Հ ա ռ ա մ ի կ.— 150 տուն ունի, որից 110 տունը հայեր են, մնացածները տաճիկներ: Սպանւած են 17 հոգի, տարւած են 200-ի չափ տաւար, 5-600 ոչխար և մի տասը տան միջի եղած իրեղէնները:

Է լ ք ի ս.— 60-70 տուն: Սպանւած չկայ, բայց բո- լորովին թալանւած է. չմնաց ոչ մի անասուն, միայն մնացել է հորերում պահած հացահատիկները:

Խ ա լ ի— 2 ա լ ու շ.— 50-60 տուն: Ամբողջովին թա- լանւած է, սպանւած չկայ. ժողովրդի մեծ մասը դեռ ևս չէ վերադարձել գիւղ, շրջում են այս և այն կող- մերում:

Ե ն կ ի ք է օ յ.— 30-40 տուն: Սպանւած են 7 հոգի, վախից մեռած 3: 2 մարդ գնում են բերդը գան- գատելու, բացի այն, որ ոչ ոք ուշադրութիւն չէ դարձնում սրանց բողոքին, մի իւզբաշի (հարիւրա- պետ) իւր նիզամներին սպանել է տալիս սրանց, պատ- ճառ բերելով թէ՛ «Սրանք ցոյցեր են արել կառավա- րութեան դէմ»: Գիւղացիք բոլորն էլ փախչում են Չաւուրմէ գիւղը: Թշնամին ամբողջապէս թալանում է գիւղում եղածները. անօգնական գիւղացիք զրկւած ա- մեն ինչից, կառավարութեան ստիպմամբ, նորից վերա- դառնում են իրենց տները. ապրելու ոչ մի միջոց չու- նին, գիշերում են խոնաւ գետնի վրայ: Սրանց դրու- թիւնը վերին աստիճան անմխիթարական է և միևնոյն ժամանակ օգնութեան կարօս:

Ե Ղ ը Ր ա Ղ ու.— 20-25 տուն: Այս գիւղացիք երբ նկատում են թշնամու յարձակիլը, իրենց երեխանե- րի ձեռքից բռնած՝ փախչում են Ղօչու գիւղը. թըշ- նամին գիւղը ամբողջապէս թալանում է: Այս գիւղից էլ ոչինչ չէ ազատուում, բացի տների չորս պատերից, չէ ազատուում մինչև անգամ հորերում պահւած ցո- րենները, դրացի գիւղերի քիւրդ բնակիչները գիտնա- լով հորերի տեղերը, ցերեկ և գիշեր սայլերով դա- տարկում են հացահատիկները և տանում: Բնակիչնե- րի մի մասը անաջուց պահւած տնային իրեղէնները ծախելով է իրեն պահում, մի մասն էլ այս և այն չաւուրմէցի բարեկամների հասոյթներով են կառավար- ւում:

Ղ ա Ր ա Ֆ ու զ ա Ղ.— 8-10 տուն: Սրանք էլ գիւ- ղը և կենդանիները թողնելով թշնամուն, փախչում են Ղօչի:

Ս Պ Ա Ր Կ Ե Ր Տ  
I

Սուլթանական հրամանը—կտորել, աւերել, միա- ժամանակ հասնում է Խիզան և Սպարկերտ: Վազմում

է մի ահագին քրդական արշաւանք 3000-5000: Այդ գաղանական արշաւանքին մասնակցում են Ղանի, Բիթ- լիզի և Տիգրանակերտի էլաղասիները, աղաները և բե- կերը: Բիթլիզի վալիից հասնում է կայսերական հրա- մանը: Ղեկավարում են այդ սարսափելի արշաւանքը Ղարասուի գայմագամը և Սպարկերտի միւրդիւրը: Այդ երկուսի հրամանի տակ կոտորածն ու աւերմունքը գոր- ծադրում են պատմական Շէյխ-Ջալալէդդի որդի, շէյխ Սայիդ Ալի, Խուրշիդի բէկ և այլն, իրենց ձեռքի տակ ունենալով բազմաթիւ յօլլաներ ու աւազակներ:

Պատմութեան մէջ ոչ մի տեղ, մինչև իսկ Բուլղա- րիայի և առհասարակ ազատող ազգերի պատմութեան մէջ չկայ, չի յիշուում այն սարսափները, խօշտանգում- ները, լլկումները, ինչ որ տեղի է ունենում Խիզանում և Սպարկերտում: Իբրև հեռու ընկած գաւառներ, այդ տեղերում ոչ մի յեղափոխական շարժում տեղի չէր ունեցած:

Միայն աշունը «Գաշնակցութիւնը» մուտք գործեց և նրա երկու ներկայացուցիչները նոր սկսել էին յե- ղափոխական մարմիններ կազմակերպել, երբ արշաւան- քը սկսեց. Ձիւնը հաստ շերտով արդէն նստած էր: Մուսուլման խուժանը ամեն կողմից հեղեղի նման թափ- ւեց այդ տեղ: Բոլոր կիրճերը, ձանապարհները բռնւեց և անգէն ժողովուրդը մնաց գազանների ձանկում: Հե- ղեղը ամեն կողմից էր մուտք գործում և տեղի են ու- նենում անպատմելի, անլսելի սարսափներ: Ոչ մէկ գիւղ ազատ չի մնում արշաւանքից, ամեն գիւղի մէջ տաս- նեակ հայի դիակներ են փռուում: Սուլթանը իւր շնե- րի հետ միասին որքան չարչարանքներ որ ստեղծած էր, գործադրում է—գաղել, մարմինների գանազան մասե- րը լարով կապոտել, ցից հանել, կենդանի մարդոց կա- շին քերթել, սիկ հանել մարմինը, յարդ լեցնել մե- ջը և ծաւերից կախել, սարսափ տարածելու համար, կենդանի մարդիկ հաւաքել մի տեղ և այրել, մի խօս- քով այնպիսի խօշտանգումներ, խժոժութիւններ, որ ինկվիլիցիայի մէջ պատահած չէ և որ հազիւ է մատ- չելի մարդկային երևակայութեան: Այն գիւղերը, ուր «Գաշնակցութեան» նոր խմբեր էին արդէն կազմակերպ- ւած, դիմադրում են 1 օրից մինչև 1 ամիս, այնուհե- տե ընկճւում են, իսկ արշաւանքը տեւում է 2 ամիս: Երբ բոլոր գիւղերը վերջնականապէս ընկճւում են, (պէտք է ի նկատի առնել որ այդ ժամանակը այդ գա- ւառների յարաբերութիւնը դրսի հետ միանգամայն կտրած էին), սուլթանական դրօշակներ են ցցում ա- մեն գիւղի մէջ ի նշան մուսուլմանութեան: Եւ ահա ինչեր է կատարւում:—

Ձանապարհները բռնած լինելով, ժողովուրդը սար- սափահար փախչում է լեռները: Հաշիւ չկայ թէ որ- քան մարդիկ լեռներում սառչում, բքից խեղդւում են, թէ որքան երեխաներ իրենց մօր դրկում սառչում, որքի տակ տրորւում են: Վանանցից նրանք, որոնք չեն կարո- ղանում խոյս տալ, քիւրդերը ջոկում են գեղեցիկնե- րը և լլկում, բռնաբարում են: Բռնի թրքացնում են նրանց, որոնք իրենց ձեռքն են ընկնում: Քահանաների գլխները սպիտակ են փաթաթում և թրքական ծխա- կատարութիւններ սովորեցնում, գեղեցիկ երեցիկները իրենք են յափշտակում, իսկ բոլոր քահանաներին նա- իրից ամուսնացնում են մուսուլմանական օրէնքով այ- սինքն եղբօր կինը, աղջիկը, տալիս են միւս եղբօրը:

Տօրեղբորը. քահանաներից յետոյ նոյնն անում են ամբողջ մնացած ժողովրդի հետ ամուսնացնելով մօսաւոր ազգականներին. հետ, ինչպէս թիւրքի ամուսնութեան օրէնքն է: Եղբորն ամուսնացնում են եղբոր կնոջ հետ, հրացանը տալիս են ամուսնացողի ձեռքը. և առաջարկում՝ եթէ ձիւտ մուսուլման ես, սպանիր քո եղբորը, քանի որ նրա կինը քոնն է. և տանեակ եղբայր ու Տօրեղբայր հրապարակի վրայ, ժողովրդի առաջ գնդակահար եղած են. հակառակողը կենդանի այրել, կաշին քերթուել է: Մի եղբայր ամուսնացրել են իւր եղբոր աղջկայ հետ և ի նշան մուսուլմանութեան, բռնի ստիպել են հրապարակով միաւորել, առարկելով թէ «Բուք թէև մեր ամուսնութեան օրէնքն ընդունած էք բայց կարող էք գաղտնի իբրև քոյր եղբայր ասել...» Տեղտեղ իբրև կառավարութեան հրաման, յաջողել է 15 տարեկանից վեր կոտորել, բացի գեղեցիկ կանանցից, և սպանւածների դիակները թաղել են թիւրք գերեզմանատներում, որպէսզի մատաղ սերունդը յաճախելով իր ծնողաց գերեզմանները, հայկական յիշատակները մոռանայ:

Հիմնայնապէս աներած են բոլոր եկեղեցիները և վանքերը, ոմանք էլ մզկիթի փոխած: Այրած են բոլոր եկեղեցական գրքերը, մեծ մասը հայի ձեռքով, և եկեղեցական զգեստները: Իսպառ կողոպտած են ամեն ինչ՝ ոչխար, տաւար, ցորեն, մեղր և այլն: Բռնի թըրքացրած հայերին այժմ պահում են իրենց կողոպտած ուտեստով: Այս անդեկութիւնները, որ մեր երկու անձնէր սուրհանդակները բերին, խժոճութեան փոքր մասն է:

**Վ Ա Ս Պ ՈՒ Բ Ա Կ Ա Ն**

Համդիյէ գաւառակի զուտ հայաբնակ Ք ո Ւ է Կ իւղը հօկա. 14-ին կոտորածի, հայրածանաց և աներման ենթակայ եղաւ կառավարութեան և խուժան քիւրդերու կողմէ:

Նոյն օր ժամը 11-ի ատեններ, (ը. թ.) 20 հոգիէ բաղկացած խուժա մը՝ արձակ համարձակ խուժեցիկ գիւղի վրայ, սպանեցին 6 մարդ, առեւանգեցին շատ մը կիներ, հարսներ ու կոյս աղջիկներ, աւարի առին կահ կարասիք և դիւղին մէջ եղած ոչխար ու տաւար բշեցին տարին: Կառավարութեան թելադրութեամբ կատարուեցաւ այս բան, որովհետև նոյն միջոցին գիւղի մէջ կը գտնուէին 11 հարկապահանջ զինւորներ, որոնք բռնի դանազան կերակուրներ պատրաստել տւած կը ձաշէին. ասոնցմէ և ոչ մէկը դուրս ելաւ այդ աղէկարը տեսարանը դիտելու կամ արգիլելու:

Նոյն հրոսակաւորն նմանապէս հիմնայնապէս ըրաւ յիշեալ գաւառակի է իւր թ ու է կ և Վ ա ս ու ղ զուտ հայաբնակ գիւղերը: Քանի մը աղջիկներ ալ խմբապետ Շէրէֆ պէիի ձեռք կրծնափակ եղան:

Սրտեղ հարկ է յիշատակել նաև Ս ա ր ա կ ո ն ի ս բաղնիս հայ գիւղն, որ փոքր տարած մ' ու կայ հաստատուած Միացեալ ընկերութեանց կողմէ, որ Վանայ արեւելեալ-հիւսսային կողմը կիկնար: Նոյեմբեր 3-ին բարբա-

րոսներ քարուքանդ ըրին զայն, սպանեցին 8 մարդ, 25 մարդ ալ վիրաւորեցին: Արդարև սուկալի՝ էր տեսարանը, թէ ինչպէս ողջ մնացողներ կը փախչէին դէպի Արձակ գիւղ:

Նմանապէս հալածանքներու և սպանութեանց ենթարկուեցան Ռշտունեաց, Պատականց, Վանտոսպ, Մխկներ և Նուպաթ գիւղեր չարաչար կերպիւ:

Ահա Վանայ շրջակայ հայ գիւղերու վեճակը. նրանք այսօր հոգեւորքի մէջ են, մերկ, նօթի և հալածանաց ենթարկուած: Սակայն ամեն պարագայի մէջ կառավարութեան չեն դիմեր, ինչ որ կապացուցանէ թէ զոհն իր դահճապետները լաւ կը ճանչնայ և կը բռնէ ճշմարտութիւնն ժողովրդական առածին: Թէ «փորձածը կրկին փորձել յիմարութիւն է»:

**Պ Ր ՈՒ Ս Ա Յ Ի Բ Ա Ջ Ա Ր Գ Ի Ի Դ Է Ն**

**II**

Չէնկիլէրի իշխանները, որ վտանգի պահուն ինքզինքնին կորսնցուցած էին և որ ժամ առաջ բարձրագոյն իշխանութեան իմացնելու համար կը տագնապէին, բոլորովին մոռցան եղածը ու մէկ դի նետեցին բողոքագիրը, որ պատրաստուած էր կուսակալին ներկայացնելու: Այս փճացած գլուխները, որ իրենց գաղափարով, քաղաքագէտներէն ոչինչ նւազ քաղաքագիտութիւն ունին, իմաստութիւն կը սեպեն բան մը չիմացնել բարձրագոյն իշխանութեանց. այժմու քաղաքականութիւնը այնպէս կը պահանջէ եղեր: Ճշմարիտը ըսելով, իրենց շահերը այնպէս կը պահանջեն: Թողովրդին ապահովութեանը համար կարժէ՝ իրենց քճուծ շահերը վտանգել: Բազարի թիւրք աղաներու քով իրենց պատիւը կորսնցնել, լոկ ազգին հաճելի ըլլալու համար: «Մենք թիւրքերուն հետ պիտի ապրինք», կրսեն աղաները, վանդի իրենց իշխանական դիրքը և շահերը թիւրքերէն կախում ունին: Թողովորդը իզուր կաղաղակէ, կը թախանձէ, որ իւր ցաւերը ներկայացուի կուսակալութեան, բայց թիւրքերու աղաները անդրուելի կը մնան իրենց որոշման վրայ: Մի քանի օր վերջ, հասարակութիւնը կուզէ ինքնիրեն աղերսագրով մը իմացնել իւր ներդրութիւնները կուսակալին. կը պատրաստուի, 20-25 ստորագրութիւններով հանրագիր մը, որ այս բարեպաշտ իշխաններու կողմէ վարպետութեամբ մը կը պատուի և ետ կը մնայ ժողովրդին բողոքը: Մինչև այսօր, որ կը գրուին այս տուրնցմէ և ոչ մէկը իմաց արւած է Պրուսա կուսակալութեան, որ կը ստի թէ՛ քարի մանր մ'է և բնաւ չուզեր զրկանք մ'ըլլայ իւր իշխանութեան մէջը հայերուն:

Ըսեցաւ թէ՛ այս կողմերու— Բազարի և Եալովայի կառավարութիւններ, միշտ կը գրգռեն թիւրքերը հայերու դէմ: Նոյեմբերի սկիզբները Եալովային ընդհանուր պարտուց վարչութեան պաշտօնեան, ձէվաեա է-Փէնտի և էկիւնցի միլիտէրիս Ալըմ՝ աղան, գիշերով զինեալ կերթան Երուսաղէմի Ս. Յակոբայ վանքին կալ

լածներուն մէջ բնակող չէրքէզներուն գիւղը՝ Սողոմազ, որ 2էնկիլէրէն հազիւ մէկ ու կէս ժամ հեռաւորութիւն ունի: Ասոնք, մէկը գիւղի մէկ կողմէն, միւսը մէկալ կողմէն կոկսին կրակ ընել. չէրքէզները կը սարսափին, կարծելով, որ չէնկիլէրցիները իրենց վրայ յարձակած, բնաջնջ պիտի ընեն ամբողջ գիւղը: Արդէն այդ չարամիտ թիւրքերուն նպատակն ալ չէրքէզներուն այդպէս կարծել տալ էր: 2էրքէզները իրենց շփոթութենէն երբ գիւղէն փախել կը փորձէին, կը տեսնին, որ միայն երկու մարդիկ են զերենք ահաբեկողը և կը փախնեն. սողոմազցիները կը յաջողին բռնել և լաւ ետեմը քաշելով՝ կը թողուն որ երթան: Յաջորդ օրը չէրքէզներուն մուխթարը կերթայ եղերութիւնը կը պատմէ չէնկիլէրցիներուն:

Այդ օրերուն Եալովայի և Գարամուսայի կառավարութիւնները ուրիշ քանի մը առաջաւոր թիւրքերու հետ, այդ կողմերու հայ գիւղերէն ստակ կը հաւաքէին շիւղ գլուխ 20-30 ոսկի, ըսելով թէ՛ «Պիտի ազաններ ձեզ այն ամբաստանութենէն, որուն պատճառով Պոլս պիտի ղրկուի պատժելու համար:

Հայերը հարստահարելու սուտ պատճառանքներ: Նոյեմբեր 9-ին, 2էնկիլէրէն Ալահադիտի քէրովբէ սնուն 25-28 տարեկան երիտասարդը, լեռնէն փայտ արելու կերթայ ճամբան իրեն կրնկերանայ լազ մը, որ այս կողմերը բաւական ատեն ըստի դէտ եղած ըլլալով՝ ամենուն ծանօթ է քօլձի Հասան աւունով: Այս լազը յիշեալ քէրովբէն հաց և ծխախոտ կուզէ, այն ալ միամտաբար կուտայ և կերթան խօսակցելով. երբ քէրովբէն կը մօտենայ այն տեղին, ուրկէ պիտի կարէ փայտը, լազը իսկոյն ըստովէրով կը զարնէ տղան և ձին առնելով՝ կը փախչի: Աերաւորեալը տուն կը սերտի և կառավարութեան իմաց կը տուի, որ դայ նա յի: Արժու հոգ, միայն մէկ հայ մ'է զարնողը: Քանի մը օր յետոյ տղան կը մեռնի. կառավարութիւնը երկու օրէն կուգայ թաղելու հրամանը կուտայ: Ազգը, որ թէ մարդ սպանեց և թէ ձին գողցաւ տարաւ, կը պտտի անպատիժ, առանց փնտուելու: Այս դէպքէն ետեմ օր վերջ, Հասանը, երկու ընկերներով 2էնկիլէրի շրջակայները կը պտտի, անշուշտ ուրիշ որսի մը համար. բաղնեպան Ղազարին կը հանդիպին այս շարագործները. Հասանը երկու անգամ հրացան կը պարպէ Ղազարին վրայ. գնդակները կը վերկայն. մին անութիւն ներքեւէն, միւս վարտիքին մէջէն անցնելով. մարդը տուն կուգայ ահաբեկած:

Բաւական ատենէ ի վեր Սեօլեօզէն, Վիւրլէէն, 2էնկիլէրէն և Մեծ Նորգիւղէն 25-30 մարդ Բազար-դիւղ բանտարկեալ են իբրև գողերու ընկեր կամ պահպանիչ: Կառավարութենէն յերկուրած պարզ զբարտարութիւն է ասիկա. գողը ո՛վ է, պաշտպանը ո՛վ. ամենն ալ իրենք են: Իրաւ որ գողեր երեցեր են այս կողմեր և տաճիկ մը լեռը տարեր. մի քանի օրէն, չեմ գիտեր քանի ոսկի փրկանք առած թող տներ են, բայց հայեր են այդ աւազակները: Գողերէն տարած տաճիկը կը պտտայ, կաղաղակէ թէ՛ «հայ չէին զիս բռնողները: աղէկ գիտեմ, որ թիւրք և յունաստանցի էին, բընաւ. հայ չկար անոնց հետ», սակայն որո՞ւ կըսես «արգարակորով» կառավարութեան մարդիկ կստիպեն, որ անպատճառ «հայ էին» ըսէ, հայերուն վրայ գնէ: Մարդը հաստատուն կը կենայ ճշմարտութեան վրայ

Թէպէտ, բայց իրենք ալ հաստատուն կը մնան իրենց որոշման վրայ, որէ շարժարել անմեղ հայերը: Եւ ինչ սարսափելի տանջանքներ կուտան խեղճերուն. անօթի, ծարաւ, ներսէներս մարդ չիմանալու տեղերու մէջ, անլուր հայհոյեանքներով սոսկալի խօզժութիւններու կը բնթարկեն, մահացնելու համար: Աղորմելի կալանաւորներ, մահէն ազատելու համար, ինչ որ կը հարցուի, «այո» կը պատասխանեն: Ասիկա իբրև անաչառ քրնուութեան արդիւնք, թուղթեր շինած կը ղրկուի Պոլսու: Ատենէ մը ի վեր ոչ մէկ հայ կը համարձակի իր տեղէն դուրս ելնել. թիւրքեր և զինուորներ կատղած կը պտտին դուրսերը. բռնած հայերնին առանց փորձանքի չեն թողուր: Մեծ Նորգիւղէն և Վիւրլէէն երկու մարդ, 55-60 տարեկան, մին լեռը միւսը դաշտը կը բռնեն և կը բռնաբարեն. անոնց պատիւը:

Ասոնք մեր «բարեխնամ» կառավարութեան «արդար վարչութեան» մէկ քանի նմուշներն են:

Ե Ո Չ Ղ Ա Տ

Նոյեմ. 2-ի գիշերը, Գարապելի գիւղը վաճառակաւութեամբ զբաղող Պոյեաճեան Առաքելին սենեակը քանի մը թիւրքեր մտնելով՝ ապրանքը կը կողպան ու զընքն ալ մի քան տեղերէ վերաւորելով, կը փախչին ու դեռ ձերբակալած չեն:

Նոյեմ 7-ին Գողաբեան Վիրակոս, ձինկեօզեան Յարութիւն և Պալթայեան Տիգրան Ազունլուէ վերադարձած պահուն 2արմաք-Վետիկ պոյտաղցի չէրքէզներէ յարձակում կրելով՝ ձիերնին, լաթերնին ու ստակ և ժամացոյցնին կը կորսնցնեն: 2արագործներէն մին Ալի պէյ օղու Պէքիրն է:

Նոյեմ. 8-ին Ղալայճի Յովհաննէս 2էթին-Տերէի մէջ տաճիկ գիւղացիներէ յարձակում կրելով, կը կողպուի ու կսպանուի:

Նոյեմ 9-ին, չէրքէզները Իսմայիլի, Էմիրլէրի ու Ճերիալէսի մէջ բնակող հայ բօշաներուն ամբողջ ստացւածքը կողպտեցին:

Նոյեմ. 10-ին, թէև Թէրզիլի գիւղէն ներկայացւած աղերսագրին վրայ կառավարութիւնը 200-ի սօս զինուոր ղրկեց հոն, սակայն անոնց հասնելէն առաջ չէրքէզները Ֆէյտսիզեան Օհաննէս ու Փափազեան Ալիքսան աղաներու խանութին վրայ յարձակելով՝ 70-80 ոսկի արժէքով ապրանք կը տանին:

Նոյեմ. 15-ին, գործի պատճառով Մէճիտիէ գաւառակին գիւղերը շրջող 2ոլաքեան Սարաճ Սենկերիմին ու ծառան Գանթարճը կարապետին իբր ընկեր ձևանալով երկու թուրքեր Սըղ-Տերէի մէջ Վինկերիմը գաւազանի հարւածով մը կսպանեն, ընկերն ալ ձեծելով ուժասպառ ձգելէ վերջ՝ ունեցածնին կը կողպտեն:

Նոյեմ. 16-ին, Սարը-Համալայի աւագ-քահանայ Մերձանեան Ակոբի հետ Եողլատ եկած ատենին Շահմուրատը Իմամ օղու Իսմայիլը և Քիւչիւք քեօհնէկի Յէլի Ալի Մուստաֆան վրանին յարձակելով կը կողպտեն ու կաշխատան զանոնք սպանել: Քեօնէկի միւսիւր Մուսա պէյը քանի մը հեծեալով օգնութեան կը հասնի ու Մուստաֆան վիրաւորելով Եողլատ կը խրկուի:

Նոյեմ. 18-ին, Տիշլի գիւղին մէջ արածող ետպատ-

ցի Արամեան Անտօն աղային 620 թիֆթիկի ոչխարները չէրքէզներ քշելով կը տանեն:

Նոյեմ. 21-ին, բազմաթիւ չէրքէզներ Պէպէկ գիւղին վրայ յարձակելով՝ դոյքերն ու անասունները կը կողոպտեն: Կառավարութիւնը պաշտպանութեան համար զինւորներ ղրկած էր, սակայն ասոնք տեղերնուն չեն շարժիր, իրեն դիմողներուն յիսնապետ Ապտուրահման կը պատասխանէ, թէ՛ զէնքով պաշտպանելու հրաման չունենալուն անկարող է բան մ'ընել:

Նաև չէրքէզները տարած են:

Նոյեմ. 24-ին, Քէտիլէրէն Սէրմէճեան Գապարճեանին 260 թիֆթիկի ոչխարները:

Նոյեմ. 25-ին, Գրզըլ-Թէփէէն Գասատճեան Պետրոս աղայի 25 արջաուր:

Նոյեմ. 25-ին, Արապլէն Փափազեան Համբարձում աղային ութը ձին:

Գեկտեմբերի 1-ին, Աղձինէն Աբգարեաններու 17 դովեջ:

Գեկտ. 2-ին, Թիւրքմէն Սարըլարներէն 2էօյիւրճեան Գրիգորի 60 ոչխարը: Իւր կամքով ոչխարները յանձնել չուզելուն Քիւրտ օղու Սատրգը (2էօյիւրճեանին ծառան) սպանւած է:

Չօրումին և Հէլէ-Չիլէնի սոսկալի կոտորածին հերինակները նշանաւոր Այիններն են:

Տ Է Ն Ի Ք-Մ Ա Տ Է Ն

150 տունէ բաղկացեալ տեղւոյս հայութիւնը, որ անցեալ տարիներու մէջ ամիսներով բանտարկեալներ և արքորեալներ ունեցած է, այս օրերս աւանիս տեղակալի դրոյմամբ՝ թիւրք խուժանին և զինւորական դասակարգին սպառնալիքին ենթարկւած է: Նոր հրահանգ ելած է— հայուն բարև չտալ, հայուն հետ առևտուր չանել, ամեն իսլամ պէտք է զինւած շրջի հրապարակներու, շուկաներու մէջ: Զօրքերը խուժ-խուժ՝ սիւնաւոր հրացան ուսերնին՝ ցերեկ ատեն կը պտտին հայ փողոցներու մէջ, սարսափ ազդելու հայ կիներուն և նրանց զաւակներուն:

Հոկտեմբեր 15-ի միջոցները՝ Պոլսէն ընդ հսկողութեամբ թալասցի (աւան Կեսարիոյ) Առաքել անուն հայ երիտասարդ մը իր հայրենիքը վերադարձած ատեն Գարայը կողմէ թիւրքաբանի գիւղը կը հասնի, որ Գաղատիոյ և գիւղաքաղաքիս մէջ տեղն է: Հոն բանտին մէջ պաշտօնէից անլուր վայրագութեան և զազանային կեղեքմանց ու տանջանայ տակ կը մեռնի: Նոյնպէս հայ երիտասարդ մը, որոյ անունը անծանօթ է մեզ, դարձեալ նոյն գիւղին բանտին մէջ անողորմ տանջանքներով կսպաննեն: սա սրիկայ նազըմ փաշայի Պոլսէն իրենց հայրենիք արքորած երիտասարդներէն է:

Նմանապէս նոյեմբեր ամսոյ սկիզբները, Կեսարիոյ Էվէրէկ գիւղէն, Պոտուր օղու Մելքոն անուն 20-22 տարեկան հայ երիտասարդ մը, Պոլսէն ընդ հսկողութեամբ իւր երկիրը տանւած ատեն կը հասնի հոս (Տէնիք-Մատէն): Բանտի պաշտօնեայք նօթի, ծարաւ ու մերկ կը թողուն երկար օրեր և անխզօրէն ամեն նախատիք ու լուտանք թափելէ վերջը՝ նրա գլխուն

դժոխային չարչարանքներու տակ թշուա երիտասարդը մահաստուեր բանտին անկիւնը իւր վերջին շունջը կը փչէ: Իրենց ըրածները որպէսզի չիմանանք և օգնութեան չհասնինք, երիտասարդին մեռնելէն յետոյ իմացուցին մեզի: Մարմինը թաղւեցաւ մարտիրոսի արժանի փառաւոր հանգէսով:

Ա Տ Ի Շ Գ Ի Ի Ղ

Հոկտեմբերի մէջ մեր գիւղէն կէս ժամ հեռաւորութեամբ Հինտի-Պապա կողմէ գիւղի Ա շ ի Ր է թ աղային, Պետիրխան քէհեա ըսած հրէշը, մի քանի անձերով կուգայ մեր գիւղը և կըսէ թէ՛ «Որչափ որ զէնք ունիք, մեզի պիտի յանձնէք, որովհետև այսպէս է կառավարութեան հրամանը»: Զմոռնանք ըսել, որ ի սկզբանէ անտի մեր գիւղին ամենաոխերիմ թշնամիներն են ասոնք: Մեր անպաշտպան ժողովուրդն ալ երկիւղէն ունեցած զէնքերը կը յանձնէ անոնց: Նոյն օրն այդ վատ հրէշին ձեռքով գիւղերնիս մեծ մասամբ աւարի կը տուի: Գիւղացիք սարսափահար կը փախչեն լեռ, սար ու ձոր թագստոց փնտռելով, տկարներ՝ կանայք, աղջկունք և մանուկներ մեծ մասամբ, կը խուժեն նոյն արիւնարբու գազանի գիւղը: Քանի մը հիւանդներ կամ տկարներ, որոնք գիւղին կողոպտման և հրկիզման ժամանակ անկարող գտնւած էին փախչել, իրենց անկողիններուն մէջ խեղդւած են: Մահտիսի Խաչատուր Պատուականեանն ալ տանիքէն գիւղին առջևի հովտը գահալիժած են: Յետոյ իրենց գիւղին մէջ իբրև պատսպարող կիներն, հարսներն ու աղջկաներն սպառնալիքով կը քշեն մօտակայ հովտին մէջ, զանոնք կը մերկացնեն և կսկսին հալածել:

Ազատ մնացողները կապաստանին նոյն գիւղերը լեռներու գլուխ, քարայրներու մէջ և հովիտներու խորքի Մէկ մասն յաջորդ օրը և մաս մ'ալ երեք օր վերջը և ուրիշ մաս մ'ալ 8-10 օրէն վերջը կը հասնին Չըբուշ քաղաքը: Այս քանի օրերուն մէջ լեռներ մնացողներ դարձեալ թշնամիէն հալածւելով՝ շատերը ըսպանւած են: Կենդանի իսկ մնացածները դեռ երևան չեկան: յայտնի չէ մեռած են, թէ ողջ:

Չըբուշ՝ հայոց բոլոր թաղերը, նոյնպէս աւերած են, ժողովուրդը անպատսպար, մերկ ու անօթի մնացած փողոցները կը թափառին: Մանուկները այլազգիներու տունները պատառ մը հաց կը մուրան:

Լսածնուս նայելով, մեր վաճառ ալ կողոպտած ու քանդած են: Եթէ անստոյգ լինէր, գոնէ մեր թշուա ժողովուրդեան կէսը հոն կրնար պատսպարիլ, եթէ եղանակը ներքի և ձամբաները ապահով ըլլային:

Դաշնակցութեան անձամբօթսերից խնդրում է թղթակցութեան և ներառուութեան համար դիմել:

Armène-Gaspar, poste restante, Carouge (Suisse)

L. Boodle, 19, Russell Road, Kensington, London W.

Վիեննա, Դաշնակցութեան ազատ տպարան